

ԾԵՐՈԱՆ ԹՈՂԳՈՄՅԱՆ

ՀԱՐԱԳԱՏ

ԼԱՐԵՐ

ՀԱՅՊԵՏՇՐԱՏ

891.99

р-81

9433  
Родопы, Берес  
Балканская пров.

5n.

ԵՐԵՎԱՆ ԹՈՐԴՈՄՅԱՆ

891.99  
Բ-81

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ


Հ 28018  
Հ 433



ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

1947



ЦЕРУН ТОРГОМЯН  
РОДНЫЕ СТРУНЫ  
(На армянском языке)  
Армиз, Ереван, 1947

## ՀԱՐԱԶԵՏ ԼԱԲԵՐ

### 1.

Զյունն իշել էր արդեն սայլապան Մելքոնի մազերին, դեմքին բազմաթիվ ծալքեր ու փոսիկներ էին գոյացել, նա ծերացել էր արդեն: Բայց ձեռների ու ոտների մեջ դեռ եռանդ ու աշխուժություն կար: Կյանքը սայլի վրա էր մաշել նա ու սիրում էր սայլը հայրական տան պես:

Ոչ մի ձայն, ոչ մի նվագ այնքան անուշ չէր հնչում նրա ականջին, որքան իր սայլի միալար ու միապաղպաղ ճոխնչը: Ոչ մի էակ աշխարհում, այնքան սիրելի ու մտերիմ չէր նրան, որքան իր զուկս եղները՝ զլաբազուկ ու հաստապինդ, միագույն ու միատարիք, ոլորուն կտորշներով, վաստակաբեկ, բարի աշքերով: Տարիներ ի վեց նրանք աշխատել էին ծերունի սայլապանի հետ միասին, հավասարապես բաժանել ուրախությունն ու տիրությունը: Ու ծերունին չերմորեն սիրում էր նրանց հարազատ որդիների պես: Չէ որ նա ոչ ոք շոներ, զուրկ էր ընտանեկան քաղցրությունից և այդ եղներն էին միակ հարազատները նրա կյանքի:

Ահա նրանք, այդ եղները, կանգնել են ախոռում մասշրի առաջ, ուտում են կամ զլուխները խոնարհած՝ հորանչում: Ծերունին խանդաղատանքով շոյում է նրանց մեջքն ու վիզը և կարծես կենդանիների շնչառությամբ՝ արբած՝ անուշ երազներով օրորվում: Երբ նա կուցած՝ ցախավելով մաքրում է փեյինը և կույտ անում ախոռի մի անկյունում, կամ խորի խուրձը բերում, քրքրում է մսուրի մեջ, կենդանիները ժպտում են կարծես, կիսախոռի մրավիող աշքերը հա-

ոռում նրան՝ իրենց անհուն գոհոնակությունն ու հավատար-  
մությունն արտահայտելու համար: Նրանք դնչերը երկարուա  
են, վզները մսուրի սյունին են քսում կամ թե մեղմիվ որո-  
ճում:

«Մատաղ լինեմ ձեզ», — մրմնջում է ծերունին:

Նրա սպիտակ արտևանունքների տակ թաղված աշքերը  
ժպտում են, տարիների հարվածից կոշկոված դեմքն ինք-  
նագոհ արտահայտություն է ստանում, հոգին բերկրանքով  
լցվում:

Ուշ երեկոյան նա պառկում է ախոռի խորթում դտնվող  
բարձրադիր թախտին և շուրջը տիրող մառախուղի ու զաղօ-  
օդի մեջ ննջում:

## 2.

— Հե՛յ-հե՛յ, քաշեք հա՛, քաշե՛ք, մատաղ ձեր ուսին  
ու ոտին, ուժ ու զորություն ձեր ամուր լանջին...

Առավոտ է: Արևը հենց նոր է իր վարդագույն շողերը  
ցանել հորիզոնի վրա: Անասելի ցանկությամբ ծաղիկներն  
ու խոտերը արևին են ձգտում և նոր կյանքով լցված՝ ժըպ-  
տում հեղանազ: Լուաթաթախ երկինքն այնքան պայծառ է  
ու զինջ, որ կարծես ժպտում է անրջող աշքի պես: Եռկնքի  
անհուն կապույտում իր վիթխարի զանգվածով արձանացած  
է ծերունի Արարատը՝ գլխին հերմակ թագ, դեմքը խոժոռ  
ու անհաղորդ: Ո՞վ գիտե, ինչ է պատմում դարերի անլուր  
խորքից ելած այդ ալեւոր ծերունին, ինչ դառն հուշեր ու  
դեպքեր՝ հեռավոր ու մոտավոր անցյալից...

Արտերի ու դարավանդների եղերքին կանգնել են բար-  
դիները, գեպի երկինք ձգել իրենց թևերը և կարծես տարվել  
են ինչ-որ մտքով, երազում են: Իսկ արտուաները ճովողե-  
լով իշխում են արտերի վրա, ինչ-որ բան որոնում, աւա-  
կրկին ուրախ երգերով բարձրանում են երկինք: Հեռուներից  
լսվում է ձիու խրխինջը: Սարալանջին հնձվորը խոտ է  
հնձում բեկի կամ աղայի համար: Երբեմն-երբեմն լսվում է  
նրա երգը: Տխուր է այդ երգը, թախծալի: Ո՞վ գիտե, իր  
աշխատանքի ի՞նչ չնշին մասն է իրեն բաժին ընկնում...

Ծերուկ Մելքոնի սայլը մեղմորեն շարժվում է արտերի

ու այդիների միջով։ Մելքոնը ուրիշների համար վարձով խոտ, փայտ, կամ ուրիշ բան է կրում և այդ վարձով մի կերպ իր ու եղների գլուխը պահում։ Ապրում է նա լավ ու վատ օրերն իրար խառնած։ Ախոռի գուանը հանգստացած սայլը շնչավորվել է, սոնիները տնքում են, երգում միալար։ Այդ երգը ծերուկ սայլապանին ուժ ու եռանդ է ներշնչում։ Հանդիսավոր ու համընթաց քայլում են եղները, չեն շտապում, անմոռնչ քաշում են բեռնավորված սայլը, սիրով կատարում տիրոջ կամքը։

Ոսկեթպիտ արեց բարձրանում է երկինք։ Սկսում է Արարատյան դաշտի սովորական տոթը։ Որքան լավ է կանչափառ այդիներում, ուր տերեների արանքից կարմրին է տալիս կեռասը, ժպտում ծիրանը կամ պատկերվում է թերհաս գեղձի տիպուր դեմքը։

Երկարադունչ սայլին բազմած՝ ծերուկ Մելքոնը շիշտապում, չի ուզում խանգարել եղների դանդաղ երթը։ Որտեղ էլ նա գնա հայրենական այս դաշտում, արթուն սկահակի պես նրան հետեւում է հավիտենապես անշարժացած ալեոր Մասիսը։

### 3.

Այս անդամ ծերուկ Մելքոնի սայլին վիճակվել էր ուրիշ բան փոխադրել...

Սաստիկ մոայլ էր Մելքոնը, սիրտը բեկված, աչքերը պղտոր ու մալուց։

Սկսվել էր իմպերիալիստական պատերազմը և սարսուռ ազդող դեպքեր էին տեղի ունեցել ծերուկ սայլապանի աշքի առաջ։ Տաճկահայստանում կոտորում էին հայերին նրանք ստիպված էին տասնյակ հազարներով թողնել իրենց տուն ու տեղը և փախչել, ապաստան գտնել Արարատյան դաշտի գյուղերում ու քաղաքներում։ Եվ այժմ նրանք անխնամ թափվել էին հրապարակներում, եկեղեցիների և դրաբոցների բակերում, պատերի տակ։

Հազարավոր մարդիկ մնացել էին անօթևան, անկրակ ու անճրագ, անտեր ու սոված։ Պատերազմ էր, արյուն էր թափվում, ամեն ոք մտածում էր իր մասին։ Եվ փախստա-

կանները, համարյա անօգնական՝ մեռնում էին սովոր, տաշ  
րափոխիկ հիվանդություններից:

Երբ ծերուկ Մելքոնը տեսավ այդ սոսկալի պատկերը,  
ու օրվան համար պահած երկու պարկ ալլուրը բարձեց  
սայլին և շարժվեց դեպի մոտակա քաղաքը:

«Դնանք խեղճերին օգնենք». մտմտաց նա կարեկցու-  
թյան խորը զգացմունքով լցված:

Նա այդ ալլուրը բաժանեց մի քանի ընտանիքի, որոնք  
խորին շնորհակալություն հայտնեցին նրան: Բայց երկու  
պարկ ալլուրով կարելի՝ էր այդ բազմաթիվ խեղճերի ցա-  
վերն ամորել, նրանց ծով կարիքները բավարարել:

Մերունին որոշեց շարունակել իր օգնությունը: Նրան  
առաջարկեցին փողոցներում ընկած մեռելները փխստիրել  
գերեզմանատում: Եվ նա հանձն առավլ..

Խիստ ծանր ու անախորժ էր այդ գործը ծերունու հա-  
մար, բայց քաղաքացիական պարտականության և մարդա-  
սիրության զգացմունքն ստիպում էր նրան լուր տանել այդ  
անախորժությունը:

— Քաշեք հա՛, քաշե՛ք, մեր եղբայրներն են սրանք,  
անխիղճ ու անսիրտ մարդկանց զո՞հ դարձած մեր խեղճ  
եղբայրները, — մըմնջում էր ծերունի մեռելատարը՝ սայլի  
հենակին նստած:

#### 4.

Մահվան պես խորհրդավոր ու մոայլ էր սայլի երթը,  
իսկ նրա ճոխնշը լալագին մի ողբ էր շրջապատող լուսության  
մեջ: Մեռելներին ուղեկցող այդ տիսուր սրտմաշուկ երգը  
շարունակ հնչում էր ծերունու ականջին:

Ահա մի քանի օր է, որ Մելքոնի սայլը բեռնվում է  
դիակներով, և ծերունու ցավատանշ սիրտը տնքում է այդ  
սոսկալի պատկերից: Կարծես նրա դեմքն ավելի է շորացել,  
խորշումել, թախծալի աշքերն ավելի խորն են ընկել, իսկ  
ուսերին ինչ-որ տարօրինակ ծանրություն է ճնշում...

Այդ օրը նա սովորականից ավելի ուշ էր գնում գերեզ-  
մանատուն:

Վերջալույսի վտիտ ցոլքերը վաղուց էին մարել: Մութն

Քչել էր արդեն և իր մոայլ քողի տակ առել քաղաքը: Դեպի ծայրամասը ձգվող փողոցն ամայի էր: Միմյանցից հեռու նստած միահարկ տները պատկերվում էին ուրվականների պես: Մեռելատար սայլն էր միայն շարունակում իր խոպոտ ձոփնչը, որ ճնշում, այրում էր ծերունու ուղեղը:

Այդ երեկո եղները հազիվ էին շարժվում. հեռում, տղնքում էին շնչապատառ, բերաններից փրփուր էր ցայտում, Եվ ծերունուն թվում էր, թե նրանք արտասվում են... Նրանք պլուսները խոնարհում, վզները թթվափում էին, կարծես ուզում էին ազատվել լծից, կարծես դժոն էին, որ տերը այդպիսի ծանր ու անհաճո աշխատանքի է լծել իրենց: Ո՞ւր էր նրանց առաջլա կորովը, աշխատժությունը, երբ քայլում էին կանաչածածկ դաշտերով:

Ծերունին այնպիսի՝ կարոտով մտաքերեց գաշտավայրի ազատ բնությունը, ախոռի բարձրադիր թախտը: Նա այնպես էր ուզում պառկել թախտին հանգտանալ, կարծես թուլացել էր, անդիմազրելիորեն ուժաթափ էր լինում: Ամեն ինչ մոայլ էր զուրջը, ամեն տուն անձունի ուրվական, իսկ փողոցի ծառերը պատկերվում էին որպես խորհրդավոր մութ զանգվածներ: Մի ցուրտ, անախորժ սարսուռ էր սորդուկում նրա մարմնով, և նա դողում էր: Նրան անտանելի թվաց մեռելներից բուրող յուրահատուկ հոտը և այն գիտակցությունը, որ ինքը գտնվում է դիակների մեջ: Նրան թվում էր, թե իր կոնակը մեռելներից անշատող տախտակյա միջնորմը քանդվել է և հետևից զգում է ինչ-որ անսովոր շրջյուն...

— Դե՛, զուտ, քաշեք հա՛, անիծածնե՛ր, թեզ արեք, — գոռում էր ծերունին եղների վրա և ճիպոտով անխնա հարվածում նրանց:

Խեղճ անասունները ջղայնացել էին, փնչում էին ու ծանրորեն շնչում: Առաջին անգամն էին տիրոջից այդքան անողոք հարվածսեր ստանում:

Սայլապանին թվում էր, թե նրանք դանդաղ են շարժվում, չեն շտապում, մեղավոր են:

Հանկարծ նրան թվաց, թե մեկը շոշափում է իր մեջքը,

ապա կարծես զգաց ինչոր խլրտում ու շարժում։ Կարծես  
թե ինչոր բան կամացով բարձրանում էր իր կռնակն է  
վեր, իջնում ու խտում իր մեջքը։ Տախտակյա միջնորմին  
մոտ ընկած դիակներից մեկը սկսել էր շարժվել ու թևը  
բարձրացնել վերև...

— Մեղա՛ քեզ տե՛ր, մեղա՛, — փնթինթաց ծերոնին  
սարսափած։

Կարծես առասպելական ուրվականների մի բաղմություն  
ամեն կողմից հարձակվեց։ Ահա նրանցից մեկը խավարի  
մեջ եկավ, արձանացավ սայլապանի դեմ, առ դեմ և անդըն-  
դախոր հայացքը սուզեց նրա ահակալած աշքերի մեջ։ Մյու-  
սը, ավելի անճոռնի ու այլանդակ, փաթաթվեց և ոսկրացած  
թերով սղմում էր նրա վիզը։ Ուրիշները պար բռնած ցատ-  
կոտում, ծամածոռթյուններ էին անում նրա շուրջը, հում  
էին, կամացով քրքջում, և մի խուլ, մահասարսուու խպիտոց  
էր լսվում...

Սարսափահար Մելքոն ապերը իջավ սայլից և խելա-  
գարի պես լեղապատառ վաղեց քաղաքից դուրս...

Իսկ եզները կանգ առան և շփոթված ու անհանդիսա-  
նայում էին խավարի մեջ, չեին հասկանում, թե ինչո՞ւ տե-  
րը լքեց իրենց ու գնաց։

Բայց մի աներեւյթ հզոր բան սայլապանին դրդեց  
կանգ առնել և մի տիրական ձայն հնչեց նրա սրտում։

«Ուր ես փախչում, այ մարդ, ինչո՞ւ ես լքում սայլը,  
եզները, հարազատները, կյանքը, ամեն ինչ։ Մի՞թե այդ-  
քան վախկոտ ես, փոքրոպի...»

Ու շարժվեցին նրա սրտի բյուրավոր լարերը, կարծես  
փարատվեց ծանր տեսիլքը, մղձավանջը, հոգին լցվեց ան-  
զուապ բաղձանքով՝ կյանքի, մարդկայնության խորը զգաց-  
մունքներով, արիացավ ու ետ դարձավ ամեն վտանգ ու պա-  
տահար հանձն առած մարտիկի վճռականությամբ։ Նա  
կանգնեց սայլի առաջ, լծկալից բռնեց և եզներին ստիպեց  
հետևել իրեն։

Եկ համատարած լոռության մեջ կրկին հնչեց ողբասաց  
ճոխնչը...»

Սայլը մտավ գերեզմանատան մոայլ շրջագիծը և կանք առավի: Խավարի մեջ պատկերվեց գերեզմանատան պահակի մութ ուրվանկարը, մոտեցավ սայլին և հարցրեց.

— Ելի բերի՞ր, Մելքոն ապեր. մի՞թե դրանց վերջ ու սահման չկա...»

— Արկիդ մեռնեմ, Մարտին ջան, մի նեղություն քաշի ճրագ բեր, տեսնելու բան կա, — խնդրեց ծերուկը դողդոշուն ձայնով:

Պահակն իր ընտանիքով ապրում էր գերեզմանատան ծայրի տնակում: Նա զնաց և շուտով վերադարձավ հազիվ իր շուրջը լուսավորող ճրագը ձեռքին, լուսը գցեց սայլապանի վրա, տեսավ նրա տառապալից դեմքն ու կծկված, փոքրացած մարմինը և ասաց.

— Վա՛հ, էդ ի՞նչ է պատահել քեզ, այ մարդ, դողաց նո՞ւմ ես:

— Զանիդ մատաղ, մի էդ լուսը գցիր սայլին, մեռելները շարժվում են, հարություն են առել: Մեղա՛ քեզ տեր, փառաց թագավոր...

Եվ սայլապանը երկյուղածորեն խաշակնքեց երեսը:

Պահակը երկար տարիներ գերեզմանատանն ապրած և աշխատած լինելով՝ ամուր սիրտ ուներ: Ճրագի աղոտ լույսը գցեց սայլին և մեռելների արանքում տեսավ մեկին, որ թեր ջղաձգորեն շարժում էր:

— Հլա՛, ախպերս, ճիշտ որ նրանցից մեկը սաղացել է: Անսիրտ մարդիկ սաղն ու մեռածը, շորն ու թացը իրար են խառնել:

— Աստվա՛ծ, տեր ամենակալը պատժեց մեզ, ով գիտե ի՞նչ մեղք էինք գործել, — պատասխանեց ծերուկը մոր մոքող ձայնով:

— Դա աստծու բանը չի, ախպերս, մեր գլխին եկած էս մեծ փորձանքն ու դժբախտությունն արյունախում ու գաղան մարդկանց գործն է, նրանց սարքածը, թե չէ՝ ժողովուրդը, աղքատ գյուղացին, իրենց արդար քրտինքով ապ-

բող մարդիկ ինչ մեղք էին գործել, որ աստվածը պատժեր...

Այսպես ասելով պահակը մոտակա բարձր շիրմաքարին՝  
դրեց ճրագը և սկսեց մեռելներին ցած թափել, որպեսզի  
գերեզմանափորները գան ու թաղեն:

— Էդ մեկը թող, Մարտին ջան, թող մնա սայլին:

Պահակը կատարեց սայլապանի խնդիրը: Նա մաքրեց  
սայլը, իսկ թերը շարժողին թողեց այնտեղ: Ապա ճրագն  
ավելի մոտ բերելով ուշադրությամբ նայեց և ասաց.

— Այ մա՛րդ ջահել տղա է խեղճը: Ով գիտե, ո՞ր ծնու-  
ղըն է կորցրել իր մինումարին...

Նա ճրագը դրեց սայլին, քայլերն ուղղեց տուն և քիչ  
հետո վերադարձավ մի աման ջրով: Զուրը սրսկեց պառկած  
տղայի երեսին, ճակատին, թաց մատներով շոյեց և մաժեց  
նրա վիզն ու քունքերը և տղան ջղածդորեն շարժվեց, մի  
ոտքը ծալեց, թերը երկարեց, խորը շունչ քաշեց, փակ կո-  
պերը կամաց-կամաց բացվեցին և նրանց արանքից երևա-  
ցին կենդանության շող առկայօնող աշքերը:

— Սաղանում է: Ինչ գիտես ինչ հիվանդությունից կամ  
սովոր է չորացել, տապակվել խեղճը: Մածոնը կամ թար-  
նապուրը ճար ու դարման կաներ, ափսոս, որ չունեմ,—  
ասաց պահակը:

— Կտանեմ մոտս, կինամեմ, ճար կանեմ, ոտքի կը-  
կանգնեցնեմ,—ասաց Մելքոն ապերը շերմորեն և քաշեց  
եզների լծկալից:

Սայլը ճոնչաց և արագորեն դուրս եկավ գերեզմանա-  
տան շրջանակից: Իսկ պահակը ճրագը ձեռքին գնաց տուն:

Կարծես մի ծանր քար գլորվեց Մելքոն ապոր ուսից,  
երբ սայլը դուրս եկավ հեռատարած հարթավայրը և սկսեց  
գնալ արտերի ու բանջարանոցների միջով ձգվող մեծ ճա-  
նապարհով: Մերունին թողեց լծկալը և քայլում էր սայլի  
կողքով: Եզները գիտեին ճամբան և գնում էին հանդարտ,  
անարգել:

Խաղաղ ու անդորր գիշեր էր: Արագածի լանջերից  
փլամ էր զով հովը և շոյում, թարմացնում էր սայլապանի  
դեմքը: Թեև նրա աշքին էլ չէին պատկերվում զանազան

ստվերներ, ուրվականներ, բայց տխուր մտքերը շրջապատել շարչարում էին նրա ուղեղը:

«Արդյոք ինչո՞ւ էդպես վատ են մարդիկ, ծանր է կյանքը, էդքան դժվար են աշխարհի գործերը: Մի՛թե հնարավոր չէ, որ մարդիկ հաշտ ու սիրով ապրեն և լավ կյանք ստեղծեն իրենց համար: Զարմանք բան է, ախտեր...»

Սայլի վրա պառկած հիվանդը տնքաց, խորը հառաշանք արձակեց, շարժվեց դես ու դեն և կամացուկ մրմնջաց. «Ա՛խ, մայրիկ զան...»

— Հա զան, զանիդ մատաղ, կտանեմ քեզ, աշքիս լույսի պես կպահեմ, կպահպանեմ, ոտքի կկանգնեցնեմ, կըտամ արկին, կյանքին, աշխարհին, մատղաշ շանիդ մատաղ,—արձագանքեց սայլապանը նոր լիցք ու եռանդ ստացած:

## 6.

Ի՞նչ զերմությամբ ու գուրգուրանքով Մելքոն ապերը խնամեց ախոռի խորքում թախտին պառկած հիվանդին: Որքա՞ն սեր ու գգվանք կար կին ու երեխա չունեցող, հարազատների կարոտ քաշող այդ մենավոր մարդու մեջ: Մինչև անգամ մսուրի առաջ կանգնած եղները, լսելով հիվանդի տնքոցներն ու հազը և իրենց տիրոջ զերմագին պատասխան—բացականչությունները, երբեմն-երբեմն գլուխները դարձրած, նայում էին թախտի կողմը: Արդյոք ի՞նչ խոհ կամ զգայություն առաջ բերեց այդ նոր եռևութը անբանանասունների մեջ:

Սայլապանին հարկ չեղավ դիմել բժշկի կամ ուրիշների օգնության: Հետևելով գերեզմանատան պահակի խորհրդին՝ նա ուժ տվեց մածնին, կաթին, մածնապողին: Նստում էր հիվանդի կողքին, նրա գլուխը դնում իր ծնկանը, շոյում, փայփայում էր մաղերը և կերակրում ինչպես մայրը՝ որդուն:

— Դե կեր, շատ կեր, զորացիր ու վեր կաց, բարաշան...

Մի ամիս հետո հիվանդը ոտքի ելավ, ախոռից գուրս էր գալիս, նստում գտանը, մեծ քարին: Գանգուր մազերով, խոհում աշքերով մոտ տասնչորս տարեկան տղա էր. նա՝ Արտաշ անունով, բայց տակավին թույլ էր, շատ գունատ ու վտիտ: Արևն ու լուսը նոր-նոր էին ուժ ու կորով հաղորդում նրան:

Մի օր գործից հետո՝ Մելքոն ապերը նստեցրեց նրան իր կողքին և խնդրեց պատմել իր կյանքից, պատերազմից, գաղթից:

— Կարելի՞ է պատմել այն սարսափելի փոթորիկները, որ անցան մեր գլխով,—ասաց պատանին խորը հառաշելով,—Արածանու ափին էինք ապրում, լեռների գրկում: Գեղեցիկ էր մեր երկիրը, բերքով-բարիքով առատ, օդը՝ զույթում՝ պաղ: Հող էինք մշակում, անասուն պահում և ապրում էինք լավ թե վատ: Երեք տարի ես սովորեցի գպրցում, հետո օգնում էի Հորս սաշում, դաշտում: Սկսվեց մեծ պատերազմը, ցնցեց բոլորին սրտերը, տակն ու վրա արեց մեր կյանքը: Մի օր էլ սկ ամպն իջավ ու պայթեց մեր գըլխին: Տաճկական կանոնավոր զորքերը շրջապատեցին մեր շրջանի գյուղերը, փորձեցին հայերին կոտորել, տեղահանել: Ինչո՞ւ, ի՞նչ մեղքի համար, մինչև էսօր ես չգիտեմ... Մերոնք, տղամարդիկ թե կին, քարով, փայտով, ատրճանակով թե հրացանով ինքնապաշտպանության դիմեցին և ժողովրդին գաղթեցրին դեպի արևելք: Անհավասար կոիլ էր: Մերոնք կովում էին թվով շատ ավելի և լավ զինված կանոնավոր զորքի դեմ: Շատ արյուն թափվեց, շատ գյուղեր ու քաղաքներ ավերվեցին, մոխիր դարձան: Հարյուրավոր կիլոմետրներ անցանք, կտրեցինք սարեր, ձորեր, ծործորներ: Գիշեր-ցերեկ գնում էինք: Հայրս ու մեծ եղբայրս կովում սպանվեցին: Ուժահատ լինելուց թե սովոր մեռավ փոքր քուրս: Ծով արցունք թափվեց մորս աշքերից: Հորեղբարս մեզ խառնեց իր ընտանիքին, բայց սահմանի մոտ կորավ նա, սպանվեց՝ թե գերի ընկավ, հայտնի չէ: Մենք եկանք ու թափվեցինք եջմիածնի պատերի տակ, մի քանի տասնյակ հազար ժողովուրդ թափվեց այնտեղ: Ասեղ գցելու

տեղ, շարժվելու ճար-ճարանք չկար: Մի օր մեծ քույրս ընկավ գետին, դեղնեց, շորացավ ու հանգավ... Հաղիվ էին չորացել մորս աչքերը, երբ ես ընկա, տաքության մեջ տապակվում էի, կարծես թե ինձ զցել էին թոնրի մեջ, թեժ կրակի վրա, խաշում էին: Գլուխս սաստիկ ցավում էր, աշքերս դուրս էին թռչում, մարմնիս վրա կարմիր բշտիկներ բռնան... Հիշում եմ մորս, որ ինձ վրա կռացած, ահաբեկ աշքերով արտասվում էր, ծեծում ծնկները, չփիտեր ինչ աներ: Զէ՞ որ նա, կորցնում էր իր վերջին զավակին, միակ հույս ու ապավենին: Հետո ուշքս գնաց և էլ չիմացա ինչ պատահեց, ինչ եղավ մայրս, արդյոք սա՞ղ է, թե մեռած, իմ խեղճ մայրը...

Ու փղձկաց պատանին սրտամորմոք: Փղձկաց նաև Մելքոն ապերը և ախոռի համատարած մառախուզդի մեջ, թախտի վրա, նրանք փաթաթվեցին միմյանց ու լալիս էին դառնորեն: Նրանց հետ միասին կարծես լուր արտասվում էր մի ամբողջ ժողովուրդ՝ արտահայտելով իր ծովածալալ վիշտը...

## 7.

Երկու անգամ Մելքոն ապերը սայլի քիթն ուղղեց դեպի էջմիածին և Արտաշի հետ գնաց նրա մորը փնտռելու: Շատ ման եկան, հարց ու փորձ արին, բայց չգտան:

Պատանին այրվում էր սրտի ցավից:

Երբորդ անգամն էլ գնացին, դարձյալ իզուր անցան նրանց զանքերը:

Իրիկնադեմին նրանք դուրս եկան քաղաքից, կանգ առան մեծ ճանապարհի եզերքին: Մելքոն ապերն արձակեց եղները և խոտ տվից նրանց ուտելու:

Ճանապարհով, խմբով թե մենակ, անքնդհատ գնում գալիս էին գաղթականները: Կիսամերկ էին նրանք, ցնցոտիապատ կամ խոնացած, կարկատած շորերով: Նիհար էին, դեղնած, ոսկրացած, տանջալից դեմքով, մեծ մասը

ոտարոբիկ։ Նրանցից շատերը հազիվ էին կանգնում ոտների վրա և մի կերպ քարշ էին տալիս իրենց ողորմելի գոյությունը։ Նրանց թախծոտ աշքերի մեջ դրոշմլած էր մեծ ողբերգովթյան սարսուալի պատկերը։

Ճնշված ու հուսաբեկ պատանին մոտեցավ նրանց ու հարցրեց։

— Արդյոք դուք չե՞ք ճանաչում Ազնիվ Ոսկանյանին...

Այդ հարցն այնքան սովորական էր (չե՞ որ այդ աշխարհում մարդ չկար, որ չկորցներ որևէ մեկին), շատերը լուս անցան՝ առանց ուշադրություն դարձնելու։ Մի քանիսն ռաերը վեր քաշեցին, թերևս ուժ չունեին պատասխանելու։ Կարծես գերեզմանից հենց նոր դուրս ելած, ծայրահեղ թշվառության տիպար մի ուրվական, կապույտ գլխաշորով մի կին ետ ընկավ բազմությունից և կիսածայն մրմնջաց։

— Ոսկանյան Ազնիվ..,

— Ա՛խ մայրիկ շան, — բացականչեց Արտաշը՝ ընկնելով մոր կրծքին։

Մայրը շփոթված, զարմացած, կարծես ծանր երազի միշից մի վայրկյան նայեց որդուն և ճշաց։

— Արտաշ՝ շան, բալա շան, այդ դո՞ւն ես, սաղացա՞ր, գետնի տակե՞ն դուրս եկար, հարությո՞ւն առար, սա ի՞նչ հրաշք է, բալա շան...»

Եվ սաստիկ հուզմունքից ետ ու ետ գնաց, պիտի տապալվեր գետին, բայց որդին բռնեց նրան, պահեց, և նրանք պինդ գրկախառնվեցին, երկար ժամանակ չեին բաժանվում միմյանցից։ Մոր աշքերից առատորեն հոսում էին ուրախության արցունքները։

Հետո նա ուշադրությամբ նայեց որդուն։

— Այ որդի, ո՞վ քեզ փրկեց, ոտքի կանգնեցրեց, ո՞վ քեզ հագցրեց էդ լավ շորերը։

Արտաշը ցույց տվեց Մելքոն ապօռը, որ նրանց մոտ կանգնած ուրախության արցունք էր թափում, և ասաց։

— Այ թե ով։ Էս պապիկը, մեր պապիկը...»

Եվ մայր ու որդի անդիմադրելի ուժով ընկան սայլառ պանի կրծքին: Մելքոն ապերը խիստ զգացված համբուլեց նրանց և ասաց.

— Հիմա ես երկու հարազատ ունեմ, մի աղջիկ և մի թոռ... Դե, նստեք, իմ ազիզ բալեք, նստեք գնանք տուն:

Նա եղները լծեց սայլին և նստեց իր տեղը: Սայլի վրա իրար կողքի տեղավորվեցին Արտաշն ու իր մայրը: Վերջինը շարունակ նայում էր որդուն, կրկին գրկում, կրկին համբուլում, կարծես չէր հավատում աշքերին և լալիս էր թիթեացնելով սրտի ծով գառնությունը:

Սայլը մեղմորեն շարժվում էր ճանապարհի երկայնքն ի վեր:

Իսկ փիշերը արդեն մութ փեշերով ծածկել էր աշխարհը:

## 8.

Քսան անգամ արգասավորվեց ու պտղավորվեց հողը: Երկու տասնյակ ամառ եկավ-անցավ բերքով ու բարիքով ծանրաբեռն:

Արարատյան դաշտի վրա վաղուց էր ծածանվում սուվետական գրոշակը: Աշխարհը հիմնովին փոխվել էր, փոխվել էին նաև մարդիկ ու նրանց կյանքը:

Մելքոն ապոր ախոռը վաղուց էր մոռացվել ու սրբվել մարդկանց հիշողությունից: Այժմ նրա տեղը երկհարկանի տուն էր կառուցված, վերևում երկու լուսավոր սենյակ՝ պատշգամբով ու միջանցքով, ներքեւում՝ խոհանոց, մառան, մարագ... Տան ետեր բակն էր, ապա բանջարանոցը և ծիրանի, թթի, կեռասի ու գեղձի ծառերով զարդարուն փոքրիկ այգին:

Հասուն տղամարդ էր արդեն Արտաշը: Նա ստացել էր անասնաբուժական կրթություն և մի քանի տարի էր, ինչ աշխատում էր որպես շրջանային անասնաբուժ: Լավ, ուսումնական կին ուներ, նա էլ հողբաժնումն էր աշխատում: Երկու երեխա ունեին, աղջիկ ու տղա, երկու ճովողուն

թռչնակ, որոնք տունը լցնում էին ուրախությամբ ու խընդությամբ:

Իսկ Ազնիվը, թեև հասակն առել էր արդեն, մազերը ճերմակում էին, բայց լցվել, շաղացել էր, աշխուժացել: Նոր կյանքը նրան նոր շունչ ու ոգի տվեց, կոկիկ էր հագնվում, շարումակ գործի մեջ էր: Տունը նրա թմն էր, նրա զարկերակը: Առանց նրան տերև չէր շարժվում: Բարեբեր ծեռք ուներ, կպած տեղը կկանաչեր, կծաղկեր: Իսկ տան գործը շատ, որքան ուզես և նրա ուսերին տունը առաջ էր գնում, բարիքով լցվում...

Նոր տունը, նոր ընտանիքն ու կյանքը խնդությամբ լցրին Մելքոն ապօր հոգին: Տանը հանգիստ նստած՝ նա վաշելում էր նոր կյանքի պտուղները: Միշտ լավ էր հագնվում, մոխրագույն նոր բաճկոն, սև շալվար, անկարկատան կոշիկներ: Առանձին ուշազրություն էր վայելում տան մեջ, մեծից մինչև փոքրը սիրում ու հարգում էին նրան: Զնայած խորը ծերության՝ շարունակ ժպտում-խնդմնդում էր, արևի շողքն անպակաս էր նրա դեմքից: Ու միակ բանը, որ հուզում-մտահոգում էր նրան, դա ծերությունն էր, որ հետեւում էր նրան օր ու գիշեր: Արդեն մոտեցել էր ութառնվեց աշնան գուանը, հանաք բան չէ: Եվ ծերությունը հետպհետեւ փոքրացնում էր նրան, դարձնում անմեղ մանուկ... Հաճախ էր նա գնում բանջարանց և նստում նրա խորքում մի կանաչ տեղ հանգստացող սայլին, որը գիռ մնում էր որպես հին օրերի միակ հիշատակ (իսկ եղները վաղուց հաշիվները մաքրել էին մեր աշխարհի հետ): Վաղելով, ուրախ կանչերով գալիս էին երեխաները, ծլվում, ճռվողում նրա շուրջը, նստում կողքին, ծնկանը, խաղում նրա ճերմակ մազերի հետ, և ծերումին խնդմնդում էր:

Ամառվա մի զոգ գիշեր ծերումին անհանգիստ դգաց իրեն, կուրծքը սղմում էին, կարծես օդ չկար շնչելու: Շուրերը հագավ, կամացուկ իջավ բակը, մտավ բանջարանոցը, խորը շունչ քաշեց, թեթևություն զգաց: Կարծես ինչ-որ տարօրինակ բան խայտաց նրա սրտում, թերևս կյանքի վերջին թելերն էին շարժվում այնտեղ...

Նա նստեց սայլին, կոթնեց փայտյա հենակալին, աշը քերը փակեց և մի պահ ընկավ ինքնամոռացության գիրկու ծրբ աշքերը բաց արեց, շատ զարմացավ, որ նստած է սայշին և գտնվում է էլի նույն աշխարհում: Նայեց վեր, կապտակամար երկնֆին և ապշեց... Կարծես նոր էր տեսնում Արարատյան դաշտի վրա իշած երկինքն իր բյուրավոր աղամանդներով, մարդարտաշող ջահերով: Ի՞նչ հրաշալի ջուսահանդես, ի՞նչ անմեկնելի ու անսահման պարզություն ու պայծառություն: Անհուն ու անեղը է կարծես կապույտ մշուշով շղարշված այդ հազարաշյա տարածությունը, ուր ամեն աստղ իր փայլն ունի, ժպիտն ու հմայքը և կորչում է մարդը, ոչնչանում այդ հսկայական աստղապարի մեջ...

Իսկ ի՞նչ ախորժելի ձայներ են գալիս այգիներից, դաշտերից ու դարավանդներից, շշուկներ, սվավուկներ, ի՞նչ սքանչելի երաժշտություն համապարփակ լուսության մեջ: Հապա կանաչափառ հողի բո՞ւյրը... Հրաշք բան է, ախուզեր... մտմտաց ինքնիրեն Մելքոն ապերը, որ, կարծես նոր էր զգում հայրենի երկրի բնության հրապուրցները:

Հապա իրենց նոր տո՞ւմը: Զէ՞ որ ծերուկը կարևոր մասնակցություն էր ունեցել նրա կառուցման գործին: Իր սայլով նա քար, փայտ, գերան և ուրիշ շինանյութեր էր կրել: Ո՞նց խավարամած ախոռից տեղափոխվեց երկրորդ հարկը, տեղավորվեց հիանալի սենյակում, երկաթի մահճակալի վրա, մաքուր անկողնում: Իսկ ընտանիքը, երեխաները, օշա՞խը...

Կես գիշերից վաղուց էր անցել, երբ Ազնիվը զարթնեց և շատ զարմացավ, անհանգուտացավ Մելքոն ապոր անկողինը թափուր տեսնելով:

«Ո՞ւր է գնացել արդյոք», մտածեց նա, վերնազգեստը հագավ, Արտաշին ձեն տվից և միասին գնացին գնտոելու: Նրանք ծերուկին գտան սայլի վրա, գլուխը հենակին դրած, թմրած վիճակում: Երբ ձեն տվին, նա աշքերը բացեց, խորը քնից զարթնող մարդու պես զարմացած նայեց շուրջը և տեսնելով Ազնիվին ու Արտաշին՝ ասաց.

— Գիտե՞ք ինչի մասին էի մտածում, իմ անուշ բալեք.  
Ես ափսոսում էի, որ քիչ շատ քիչ վայելեցի կյանքը, մեր  
աշխարհը: Չէ՞ որ շատ եմ ծերացել, օրերս հաշված են ար-  
դեն, հասել եմ ճամբի ծերին... Ափսո՞ս, որ էլ չեմ տեսնի  
ու վայելի էս կապույտ երկինքը, պայծառ աստղերը, այ-  
դիներն ու գաշտերը, մեր տունը, ձեզ, մեր լավ բալիկեր:  
Հազա՞ր ափսոս...

Եվ ծերունին Աղնիվի ու Արտաշի թևերին կոթնած՝  
դողդոշուն քայլերով շարժվեց դեպի տուն:

1943.

## ԼՅՉԱԿՍ ԳԼԽԻՓ

Իրիկվա մառախուղը թանձը ու մռայլ իշել էր մեկը մյուսից բարձր, շղթա կազմած լեռներին։ Սեպացած ժայռի միջով ձգվում էր երկարաձիգ, անդնդախոր ձորը, որի խորքից օձապտուս, քարքրու մի նեղ ճանապարհ գալարվում էր դեպի Աբաղալի դաշտը։

Իմպերիալիստական պատերազմի շրջանում իրենց երկրից տեղահանված թուրքահայ գաղթականների մի խուն բազմություն, հողմահեծ տերեների պես հևասպառ ու ցանոցիր, շտապում էր որչափ կարելի է շուտ դուրս գալ այդ ահալի ձորից։ Նրանց հոգնած, հյուծված դեմքերը, փոշեպատ, գգգգված մազերը, կիսամերկ, ոսկրացած մարմինները ցույց էին տալիս, որ գալիս են հեռավոր վայրերից, հրի ու սրի միջից։

Բնավեր թռչունների պես թևաթափ, ժանտ ու մահասփյուռ փոթորիկից քշվող ծովածավալ ամբոխին խառնված՝ քայլում էր գյուղացի Հարութի ընտանիքը։ Քառասունն անց, հաղթանդամ, լայն, արևառ ճակատով Հարութը զնում էր զիսահակ, մաքերի ծովն ընկած, կարծես մաքով փոխադրվել էր հոսահատորին ու կոկիծով լքած հայրենի գյուղն ու լեռը, հանդն ու ջուրը։ Նրա շալակին էր իր երեքամյա տըղան՝ Զավենը, երկար ու տաժանելի ուղևորությունից հալումաշ, դեմքը ցերեկվա տապից խանձված։ Նա փաթաթվել էր հոր վզին, աշքերը մեկ խփում էր, մեկ բաց անում և անմտորեն նայում շուրջը։ Կինը՝ Ռեհանը, միջահասակ էր, գլխին ծաղկանկար գեղզկական լաշակ, լեռնական կնկա

Հպարտ, տիրական հայացքով, ոչ գեղեցիկ համարվելու շափ նուրբ և ոչ էլ տգեղ թվալու չափ անկանոն դիմագերով։ Քայլում էր ամուսնու կողքին հուսաբեկ ու ճնշված, կրծքին կապած քաղցից մորմորող ծծկեր երեխան։

Մի կույր, սպառնական բան, մահաբեր, արյունասիլյուս մի ձեռք մղում էր նրանց շարունակ առաջ։ Լեռների ստվերախիտ լանջերում, խավարապատ ծործորների մեջ կարծես պահվել էր մի մահացում դեմ, որ, ահա, որտեղ որ է, պիտի հայտնվեր ու իր տարերային շնչով ոչնչացներ ամեն լեռնդանի էակ։ Եվ տասնյակ հազարավոր մարդիկ, ջուրն ընկած տաշեղների պես հորձանքվում էին՝ շնչապատռ վազում հրմշտելով, ընկնելով՝ ելնելով, վշտից ու երկյուղից գաղած։ Մութի մեջ լսվում էին մահասարսուռ հեք, անասունների ու մարդկանց խուլ, անորոշ ձայններ, ոտների դոփյուն։ Կենդանիներն անգամ շտապում էին սարսափով լցված, հոգնատանց, ականջները երկյուղից ցցած, աշքերի մեջ հիմար, անմիտ մի փայլ։ Ուր կոտրված մի ձի ընկել էր համբի եղերքին, տանջանքից գլուխը բարձրացնում-իշեցնում էր ու փնչացնում, հեռում ուժասպառ։ Մի քանի եղ ու հորթ խրտնած, պոչերը ոլորած վազում էին այս ու այն կողմ, հրվելով ամբոխի խիտ շղթայից։ Մայրն աղեկտուր ձայնով, կորցրած որդուն էր կանչում, որդին՝ ճամփամոլոր մորը։ Մեկն ուժասպառ մնում էր ճամփի եղերքին ինքնիրեն հանձնելով բախտի քմահաճույքին, մյուաը քարերի արանքում մերձիմահ հեռում էր ու տնքում։

— Էս յոթն օր է կքալենք ու կքալենք, վերջը չկա, ուժեղնիս հատավ, հալ ու մաշ եղանք, —մրմնջաց Ռեհանը հուսահատորեն նայելով շորս կողմը։

— Կերթանք ուր որ աշքը բռնեց, անասունի պես անքան դարձած, —պատասխանեց Հարութը և քիչ լոելուց հեշտո ավելացրեց։

— Թող մեր տունը քանդողը կանգուն չմնա. ինչո՞ւ, ի՞նչ մեղքի համար էս օրին գցեցին մեզ, աշխատանքով ու քրտինքով ապրող ուանչպար մարդ՝ էսօր էսպես մալ-տալվա-

բը թողած, բնավեր հավքի պես կբոշենք առանց իմանալու՝  
ուր:

Ռեհանն ընկզմեց դառն խոհերի գիրկը: Մի պահ նա  
սլացալ իր տունը: Այնտեղ ամեն բան մնացել էր բախտին,  
անտեր: Ահա հավերով լիքը բակը, մի անկյունում բաղկա-  
տարած, սաղարթախիտ ընկուղենին. ախոռում կովն ու  
հորթը կապված էին մսուրից. հիմա խոտը սպառված կլինի  
մսուրում, հորթը, այն ճակատը բաշ, թրվուն հորթը քաղ-  
ցից կբառաշի, ինչո՞ւ չարձակեցի կապը, քոռանան աշքերս...  
Փախչելու առավոտը հաց էր թխում ու հացը մնացել էր  
թունրի շուրջին, կթած կաթն ուզում էր մածուն մերել. հիմա  
ընց փշացել, թթվել է... Զլպտուրիկ, թխամազ այծերը մնա-  
ցել էին բակում, այժմ դուրս եկել գնացել են, ով դիտե որ  
բլրի ու սարի դոշին արածելու...

Նրա մտքերի թելը կտրեց մի խով, սարսուալի ոռնոց:  
Դա Բանդիմահու գետն էր, որ գարնանային անձրեներից  
վարարած՝ խշշալով ու փնչալով կտրում, անցնում էր ձորը:  
Մի սառն քրտինք պատեց Ռեհանի մարմինը: Թվում էր, թե  
գետի այդ խով ոռնոցում թագնված է մի շարագուշակ բան,  
որ գալիս մղձավանջի պես ծանրանում էր մարդկանց մըտ-  
քերի վրա: Շուրջը տիրեց խորհրդավոր լուռվյուն: Մարդիկ,  
նույնիսկ կենդանիները, չեին համարձակվում ծայտուն հա-  
նել և աշաբեկ ունկնդրում էին հսկա գամփոր պես ոռնա-  
ցող գետի ձայնին, որ հազար ու մի արձագանքներով գնում,  
մարում էր լեռների հեռավոր խորշերում:

Հարութի հոփնած ընտանիքը նստեց գետի մոտ, մի  
խոշոր քարի վրա, մի քանի ըսպե հանգստանալու: Ռեհա-  
նը չորացած ստինքները բացելով սկսեց երեխային կերա-  
կրել, իսկ ամուսինը շալակի երեխան դրել էր կողքին, որ  
նիհար մատների մեջ մի կտոր ու հաց պահած կրծում էր,  
իսկ ինքը գլուխը խոնարհած՝ անգիտակից, բութ հայացքով  
նայում էր անորոշ տարածություն...

Կես գիշերը մոտ էր: Խավարը թանձրացել էր ձորամի-  
ջում և իր թանձր փեշերի տակ ծածկել ամեն ինչ: Ջրի ալիք-  
ները հորձանքում էին, և ամեն պղպջակ ու կոհակ մի

տարսուալիք էր շշնջում; Ամենքին տիրել էր մի շարատանց զգայություն; Բոլորը ուշը լարած սպասում էին ինչ-որ ճակատագրական, գերբնական բանի:

Հանկարծ մի ձայն ուժգնորեն գոռաց.

— Փախե՛ք, տղեք, անցե՛ք գետը...

Մի քանի ծիավոր պատուելով ամբոխի շղթան՝ արագութեն անցան գետը: Չորի վրայի սարալանջերին շարագուշակ, աղոտ լույսեր փայլատակեցին ու ճարճատեցին հարյուրավոր հրացաններ՝ գնդակների տարափ թափելով ճանապարհի վրա: Ամբոխն էլեկտրականացավ, սարսեց: Տեղի ունեցավ աննկարագրելի բան, տարերային խուճապ: Մարդկացին մի հսկա ալիք խուժեց դեպի գետը: Չորս եղած մարդիկ սարսափից խելահեղ՝ փրփրադեղ հարճանքներին մատնվեցին: Ոմանք շալակի երեխաները գցեցին, ուժեղները կուրծքը չըի կոհակներին դեմ տալով հակառակ ափը հասան:

Ծեհանն ու Հարութը լեռներում դարանած թշնամու համագարկից հանկարծակի եկած՝ վեր թռան ու առանց հաշիվ տալու ձգվեցին ջուրը: Հարութն այդ ընդհանուրի իրարանցումի պահին ջավենին թողեց քարի վրա և մոլեգնորեն ձեղեկով ալիքները՝ մլուս ափն անցավ: Ծեհանը մթության մեջ չնկատեց այդ, ծծկեր երեխան պինդ կապեց կրծքին և ամուսնու ետկից մտավ գետը: Մի պահ սարսուաց նա՝ դեմ առնելով Բանդիմահու ցրտաշունչ, լեռնացող կոհակներին: Մինչև մեջքը հասնող ջուրը հորում էր նրան հոսանքն ի վար, և նա գերմարդկային ճիգերով հաղիվ էր կարողանում հավասարակշռությունը պահել: Երեխայով ծանրացած լեռնական կնոջ դիմացկուն կուրծքը հերոսաբար դիմադրում էր փրփրադեղ հորճանքներին, աղատության ճամբար բանում: Խորտակվող լաստի պես նա գողդողում էր շրի երեսին ու թլում էր, թե ահա, ինքն էլ ուրիշների նման պիտի քշվի անզուսպ ալիքներից ու տարվի ովլ գիտե ուրիշեղամահ ու ջարդված: Զուրը խեղդված մարմիններ էր բերում, որոնք երբեմն զարնվում էին Ծեհանին: Ով գիտե, քանի՞ մայր ուժահատ, որդեկորույս, քանի ծնողազորկ

նրեինա կամ ծվատված շահել կյանքեր կու գնացին այդ  
գիշեր Բանդիմահու մարդակու երախում:

Ահա հասավ նա մյուս ափը, բոլորովին թրջված ու  
ցրտահար: Այնտեղ ճանապարհի եղերքին նստեց հոգնաբեկ  
և լարված ուշադրությամբ ամուսնուն վնառեց: Ծեհանի նըս-  
տած տեղը համեմատաբար ապահով էր վտանգից, որով-  
հետև լեռնալանջին թագնված թշնամու գնդակներն ուղղված  
էին գետի մյուս կողմը: Ահա մթության մեջ գծագրվեց Հա-  
րութի հաղթ մարմինը, լուս ու մուալլ, որպես ուրվական:  
Ուրախության ժամիտ խաղաց կնոջ վշտակոծ դեմքին:

— Ե, Հարութ, լավ պրծանք թշնամու գնդակներից:

Բայց ամուսինը չպատասխանեց, այլ քարաժայոփ պես  
անշարժ մեխված մնաց միենույն տեղում:

— Ե՛կ, մարդ, ի՞նչ ես կանգնել սռուած ու թթված:  
Նստիր քիչ շունչ առնենք, որ շարունակենք մեր սև ճամփան:

Հարութը շշարժվեց, երկու ձեռքով բռնեց գլուխը և  
ծանր հառաշանք արձակեց: Կնոջ մարմինը դողդողաց, նրա  
մայրական սիրտը զգաց ահավոր իրականությունը:

— Շո՛, մա՛րդ, ինչի ես քար կտրել, որդիս ո՞ւր է,  
ձենը չկա:

Տեսնելով ամուսնու հանցապարտ լուսվյունը և նրա  
սարսափը՝ ցավագին կասկածից խայթված վեր թռավ, շո-  
շափեց մարդու կռնակը և ոչինչ գտնելով այնտեղ՝ խելա-  
գարի պես սկսեց վազվել դես ու դեն, ճուտը կորցրած  
թոշունի մոլեգնությամբ, աշքերը կատաղի բոցերով կայծ-  
կըստում...

— Կորա՛վ, գնաց ձեռքես որդիս, Զավենս...—մրմնջաց  
Ռեհանը հուսահատորեն ծեծելով կուրծքը և նայելով խա-  
վարամած ճամփի երկարությամբ: Ապա առյուծի կատաղու-  
թյամբ կանգնեց ամուսնու առաջ և նայեց նրա աշքերին:

— Ա՛խր ո՞ւր թողիր տղեն, Հարութ, ինչի՞ բերնիդ  
փականք եմ դրել, փակել:

— Ինչ պահեմ քեզնից, տղեն թողի գետի էն մյուս  
ափը, մեր նստած տեղը: Եթե հրացանները պայթեցին, խել-  
քըս կորցրի ու շքերի հետս, —թոթովեց Հարութը սարսափից

գարնված նապաստակի պես դողահար, գլուխը ձեռներին, քարացած, շփոթված:

— Ծո՛, անխիղճ, սիրտդ քարի՞ց է զինված, հողեմ գլուխդ, հայրական գութ չունե՞ս, ինչ է: Հիմա տղես ինչ հալի է, վախից սիրտը ճաքած կլինի...

Ել սկսեց լալ, կոծել կուրծքը, խառնել մազերը: Ծծկեր երեխան էլ դողահար սկսեց ճշալ, հեկեկալ սրտմաշուկ: Եսկ Հարութը շուրջը տիրող իրարանցումից, և խուճապից ուշքի եկած, նայելով փախչողների հետեկից՝ կմկմաց.

— Ոեհա՞ն, տղի վա՞խտը գտար, տիս, բոլորը փախչում են, մենք էլ գնանք, թե չէ՝ ուշ կլինի:

— Դու գնա՛, կաշիդ աղատիր, անաստվա՛ծ, բայց ես հեռացողը չե՛մ...

Ու հեկեկում էր Ոեհանը դառնագին, անձար: Այդտեղից պատահաբար անցնող մի զինվոր կանդ առավ, մութի թանձը ծալքերում պատկերվեց նրա բարի դեմքը: Կնոջ աղեխարշ հեծկլտանքները շարժեցին նրա զգայուն հոգին և երբ իրողությունը մանրամասնորեն իմացավ, մի ըոպե լուռ մնաց, ամփոփեց մտքերը, ապա շտապ քայլերով շարժվեց դեպի գետը:

Զըի մյուս եղերքին հրաձգությունը շարունակվում էր նույն թափով: Մահն էր շրջագայում ամենուրեք արյունախում, ոճրագավ, առատորեն հնձելով մարդկային հողմակոծ արտը: Մահվան դաժան մանգաղից խուափող ամբոխի աղեկտուր վայնասունը գետի շննդալից ոռնոցին և հրազենների ճարճապյուններին խառնված՝ վայրագորեն արձագանքում էր ձորում, թվում էր, թե ճակատագրական, հոգեվարքի օրհասական ճիրաններում հեացող աշխարհի գլխապտույտ մի անկում էր պատրաստվում:

Երիտասարդ զինվորը ջուրը մտավ և փորձեց լողաբ, երբ մի գնդակ վզզալով եկավ և նրան շատ մոտ լողացող մի մարդու կպավ: Մի թույլ, ցավագին հեծեծանք թուավ ու մարեց ալիքների աղմուկում: Զինվորի աշքերը մթնեցին, մարմինը փշաբաղվեց, ոտքերը թուլացան և ակամա հետ

դարձավ գործի հսկայական ծանրությունը շոշափած մարդու սպնասրտությամբ:

— Դժվար է,—ասաց նա մոտենալով Հարութի ընտառիքին,—գնդակները կարկուտի պես կտեղան. խորհուրդ կտամ ձեռք քաշել ու հեռանալ:

Ռեհանը նորից սկսեց մազերը պոկել, հեծկլտալ ու կանչել; Կարծես ալիքների մոնշունի միջից նրա ականջին էին հասնում անօդնական տղայի սրտակտուր ճիշերը.

— Ա՞ի, ես մեռնեի, էս ի՞նչ մե օր եկավ գլխիս. հիմի երեխաս լալիս է անճար, անօդնական...

Հանկարծ ներքին մի ուժ սաստկորեն դրդեց նրան՝ գնալ ու բերել Զավենին... Արագորեն արձակելով կրծքի կապոցը՝ նա փոքրիկ երեխան տվեց ամուսնուն:

— Դու տղամարդու սիրտ չունես, արունդ կաթ է դառնել. ես մենակ կերթամ, տղես կրերեմ:

Ու դեպի գետը վազեց շնչակտուր, հերարձակ:

Հարութը մի պահ քարացավ երկմտանքի ու վարանումիշմատնված մարդու թուլապարտությամբ: Բայց ահա ներքին առնական մի ուժ հորդեց երակների մեջ, թև առավ, մի բուպես հասավ ջուրը մտնել պատրաստվող Ռեհանին, երեխան վերադարձրեց և վճռական ձայնով ասաց.

— Արի, Ռեհան, ետ գարձիր, նամուսիս վրեն մոխիր մի ցանիր. ես կերթամ ու Զավենին կրերեմ...

Նրա վճռականությունը տեսնելով՝ Ռեհանը հիացմունքի և ուրախության զգացմունքով լցվեց: Նա ըմբռնեց իր կանացի ուժերի անզորությունը և առնական ուժի միջամտության անհրաժեշտությունն այդ գործում: Երեխան գրկում նա կանգնեց գետափին ու սպասեց հուզված:

Հարութը ջուրը մտավ: Այնտեղ ավելի մոտ և աւելի բարձր հնչեցին ականջին մահ զողանքող գնդակների վզզուցը, փախստականների սրտաշշուկ հեծեծանքները. նա ըստ գաց այլանդակված դիակների ծածանումը ալիքների թիերին, տեսավ դրանց և տարերային, բնազդական մղումով ընկրկեց հետ ու հետ: Կոհակների մի մեծ դեղ լեռնացավ շուրջը և տաշեղի պես տարութերեց նրան և նա դորավոր

Քիգով հենվելով գետի մեջտեղը ցցված մի քարաժայոի, անշարժիկ, քրտինքը պատեց ճակատին և հոգին շարշարեց փարանումի մղձավանշային զգացումը։ Դառնա՞լ թե շարունակել ճամփան...

Վերադառնա՝ իսկ ջավե՞նը, մնա այնտե՞ղ անտեր, անպաշտպան, ինչպէ՞ս արդարանա պիտի իր խղճի առաջ, քանի որ սեփական ձեռքովն էր լքել նրան. ինչ պատասխան պիտի տա Ռեհանին, ինչպես այնուհետև ճամարձակ պիտի նայի նրա աշքերին...»

Շարունակե՞լ ճամփան... Բայց գուցե չկա այլևս իր որդին, գուցե մի մոլար զնդակ պատառութել է նրա զեռատի կուրծքը. իսկ եթե իր կյանքն էլ զուր տեղ զոհվի կամ կատաղած թշնամիներին գերի ընկնի... Օ՛, այդ գաղափարը սարսափելի է թվում նրան:

Եվ ահա մի զնդակ օդն ակոսելով, մահաբեր սուլոցով անցավ ականջի մոտից և Հարութը դիվահարի պես, միտքը շփոթ ու մոլոր աշքերին մեգ ու մշուշ, հետ դարձալ ոչ չըից գուրս նետվեց:

Մեհանը, որ գենեզրին անհամբեր սպասում էր, տեսավ նրան դատարկածեն, ու գլխիկոր, կապոցի մեջ ամփոփված երեխան տեղալորեց մի ապահով վայր և այս խոսքերն արտասանելով նետվեց գետը.

— Լաշակս գլխիդ լինի թո՛ղ, վախկոտի սիրտ ունես...

Գիշերվա խորը մթության մեջ Բանդիմահու հորձանքներին կուրծք տալով, լողում էր մի կանացի մարմին։ Գիշենովության գագաթնակետին հասած մայրական զգացմունքը հրդեհել էր ամբողջ էությունը և հրում՝ շեշտակի գեղի առաջ; Երբեմն-երբեմն նա քշվում էր կուտակվող ալիքների հոսանքից, դողդողում ու ծածանվում ինչպես տաշեղ ու թվում էր, թե ահա ջրասույդ պիտի լինի, բայց բազուկների քառապատկված ուժերը ճակատ առ ճակատ մաքառելով բնության տարերքի դեմ հաղթահարում էին նրան։

Նա դնում էր անգիտակից, անդգա, շուրջը տիրող

սարսափին անհաղորդ նրա հոգին, կարծես փոխադրվել էր  
մի ուրիշ, մտքից ու զգացողությունից զորք մշուշապատ  
աշխարհ...

Ահա ոտները կոխեցին ավազուտ ափը և սիրտն սկսեց  
բարախել ուժգին. Հուտը փնտող թռչունի հոտառությամբ  
այս ու այն կողմն ընկած մարմիններն ու քարերը շոշափելով  
առաջ անցալի: Ճանապարհը դատարկվել, ամայացել էր,  
երեսում էին միայն արյունլվա, խոշտանգված դիակներ, վի-  
րավորները ցավատանջ աշքերով նայում էին հիմարորեն  
կամ սոլոսկելով քարերի միջից ուշացող մահվան անհեծք  
կարգում: Ահա Ռեհանի մատները դիպան Զավենի մար-  
մնին, որ մայրը կորցրած ճուտի պես, հրազենների պայ-  
թումներից խելահեղ, կծկվել էր քարի տակ:

Ուրախությունից խենթացած Ռեհանը վերցրեց որդուն,  
ոչտերից կարոտի բոցավառ համբուլը քաղեց ու գրկում  
սեղմած նետվեց դեպի գետը: Նորից նրա լեռնական կուրծ-  
քը ճակատեց բնության ամենի տարերքի դեմ: Որպեսզի  
որդին չթրջի՛ ձեռներով նրան բարձրացնում էր զրի մակե-  
քնություն և այդպես դանդաղորեն առաջանում դեպի հակա-  
ռակ ափը: Հոգին լի էր տղին ազատելու անհուն բերկու-  
թյամբ և աշքերը թրջել էին վշտի ու կարոտի կաթիները,

Ահա գետափը և նրանք փրկված են: Բայց ավա՞ղ...  
Հազիվ Ռեհանը ոտքը դրեց ափին, մոլորուն մի գնդակ թու-  
նավոր օձի պես ֆշշալեն գալով կպավ նրա գլխին... Նա  
անձայն պառկեց մեջքին, երեխան պինդ սղմեց կրծքին և  
մնաց անշարժ:

Բանդիմահուն ոռնում էր մոլեզնած, գաղազած: Նրա  
ալիքները հասնում, լիզում էին անշնչացած կնոջ ոտները և  
իրկին ետ քաշվում:

Ռեհանն ընկել էր գետեղըին, մազերը ցրիվ, անկանոն,  
աշքերը կիսաբաց, որոնց մեջ կարծես արտացոլում էր անձ-  
նուրաց մոր գերագույն կամքը:

Խալարի մեջ մարդկային մի մութ ուրվական պատկեր-

վեց, որը կռացավ Ռեհանի անշարժացած դիակին, խելագարի նման լայն բացած ու ճոռթած աչքերը հառեց նրա պաղ, մեռելային դեմքին։ Այնտեղ կարծես դրոշմվել էին կնոջ խոսքերը։

— Լաշակս զլիսիդ, վախկոտի սիրտ ունես...

Այս միտքը դաժանորեն շանթահարեց Հարութի ուղեղը։

1917 թ.

## ԴԱՐՆԱՆ ՃՈՒՆՉՐ

Մայիսյան առավոտը բացվում է քաղաքի վրա՛ ժպտում  
է երկինքը պայծառ։ Նորածագ արևի ոսկեժպիտ ցոլքերը  
նոր-նոր են ընկնում շենքերի վրա, ու բարախում, աղմկում  
է ոտքի ելնող, իր առօրյան սկսող քաղաքը։

Կայարանին առընթեր նոր ասֆալտած լայն ու երկար  
փողոցում եռ ու զեռ է ընկել։ Տրամվայի վագոններն ու  
ավտոներն անցնում են արագ։ Մայթերը լի են շտապող  
մարդկանցով, ոմանք քայլերն ուղղել են գետի շուկա, իսկ  
մյուսները՝ գետի գործարաններն ու հիմնարկները։ Լրջախոհ  
են նրանք, փութկոտ, արագ են գնում, որ ետ չմնան գործից,  
կյանքից։ Նրանց գեմքը գգվում է առավոտի զովությունը և շնչում  
են դարձնանային թարմությամբ հագեցած օդը։

Շտապում է նաև գետոյի վարպետ Բագրատը։ Մերթ  
ընդ մերթ նա ինքնաբավականություն արտահայտող ժպի-  
տով նայում է շուրջը, հեռատարած փողոցի երկայնքն ի  
վար, նորակառուց շենքերին, շարժվող ու ծփացող կյան-  
քին։ Որքա՞ն լավ է այդ բոլորը, բերկրալի ու սրտալի ամեն  
ինչ... Նա սիրում է Թբիլիսին, իր հայրենական քաղաքը,  
ուր ամեն բան ծանոթ է նրան, մտերիմ, հարազատ։ Զի՞  
որ մի ամբողջ կյանք է ապրել այնտեղ, հոգսիրով ու դառ-  
նությամբ, ուրախությամբ ու խնդությամբ լի կյանք։ Որքա՞ն  
լավ ու վատ օրեր են գլորվել իր կյանքից այդ քաղաքում։  
Արդեն նա բոլորել է Հիսունհինգ ամառ։ Հիսունհինգ ան-  
գամ երկիրը ծաղկել ու պտղավորվել է նրա շուրջը։ Իսկ նա  
տակավին կայտառ է, զեռ ամուր են նրա կոները և շարու-

Նակում են համառ կերպով պայքարել կյանքի համար, ստեղծագործ ու հարաճուն կյանքի համար: Եվ նա պատրաստ է է՛լ ավելի երկար, է՛լ ավելի համառ շարունակել այդ պայքարը, եթե միայն բնությունն ընդուազ գնա, չդավաճանի իրեն ծերությունը, ձյունի նման չներկի նրա մահեցը ու չնվազեն, չթուլանան նրա ուժեցը: Նա չի սիրում ծերությունը, չի ուզում կտրվել աշխատանքից, գործից: Եշխատելու գգացմոնքը նրա կյանքի գլխավոր օղակն է, շորմի: Ուժը: Նա դրանով է ապրում ու շնչում: Որքա՞ն նորդո՞ւ: Կլիներ, եթե կարողանար աշխատել, իր ձեռներն անկաշկանդ շարժել մինչև կյանքի վերջին շոնը...

Մոտ երեք տասնյակ տարի Բագրատն անցել է նույն ժամփով: Այդ ժամփան շատ է փոխվել, փոխվել են նաև փողոցի շրջակայքն ու մարդիկ: Այդ փողոցը, որտեղից նա անցնում է այժմ, մի ժամանակ անշուր էր, ծուռ ու մուռ, ամայի: Հիմա նա այնքան է բարեկարգվել, գարծել է քաղաքի կենտրոնական պողոտաներից մեկը: Իսկ որքա՞ն նոր շենքեր են բարձրացել այնտեղ, ի՞նչ բազմապիսի ու բազմազան նորություններ: Որքա՞ն փոխվել են մարդիկ, նրանց կյանքը, սովորությունները, հոգեկան աշխարհը..., ինքը, Բագրատն էլ է շատ փոխվել: Ահապին փոփոխություններ, նորություններ կան նրա կյանքում: Նրա մտքում ու ամպի պես մի պահ պատկերվեց հնուավոր անցյալը, վերհիշեց մանկության ու պատանեկության դառն օրերը, որոնք մաշվեցին նախալովկայի ծայրամասի մի խրճիթում: Զքակորության մեջ թաղված հայրը հազիվ էր կարողանում ընտանիքը կերակրել, ծայրը-ծայրին հասցնել: Երիտասարդությունն էլ մաշվեց ծանր հոգերի ու կարիքի մեջ: Հիմա նա այդ բարեզարդ, բանուկ փողոցում երեք սենյակից բաղկացած, ամեն հարմարություններով լավ բնակարան ունի և մարդավայել ապրուստ է ստեղծել իր համար:

Ահա և դեպո՞... Աշխատանքի ու ստեղծագործության այդ հինավորց կենտրոնը, Անդրկովկասյան երկաթուղիների բարախող սիրտը: Մարդկային մտքի ու մկանների ուժեղ

լարման այդ հնոցում որքա՞ն կրակ է վառվել և որքա՞ն երկաթ ու պողպատ են իրենց ձեզ փոխել՝ ենթարկվելով մարդկային կամքին։ Եվ կոփված, նոր ձեւ ու տեսք ստացած երկաթն ու պողպատը շոգու և էլեկտրականության ուժով արագորեն կտրում-անցնում են հաղարավոր կիլոմետր ունեցող երկրի ճամփաները, զոդում-միացնում են քաղաքը գյուղին, լեռներն ու դաշտերը, միլիոնավոր մարդկանց սրտերը։

Բագրատը մտնում է շոգեքարշ նորոգող ընդարձակ ցեղաւոր։ Շատ են նման ցեխերը։ Այնտեղ կանգնած են վնասված կամ վթարի ենթարկված շոգեքարշերը, որոնց ուժերը պետք է վերականգնել և կրկին ուղարկել աշխատանքի։ Բազմաթիվ մեծ ու փոքր մեքենաների, լարերի, փոկերի ու շարժիչների շրջանում, ուլսերի վրա՝ սպասում է շոգեքարշը։ Մի կողմը հնոցում ճարճատում, հեռում է հսկայական կրակը։ Նրա հրեղեն մասնաւոր արտացոլում են մեքենաների պողպատյա մասերը։ Երկաթի հենակներին ամրացրած շարժական մուղմը պատրաստ է իր ամրակուռ ծանր կնճիթն ուժգնորեն խիելու սալին և զնդացնելու նրա վրա զրած մետաղը։ Ամենուրեք երկաթն ու պողպատն են գերիշխում այստեղ, կրակի ուժը և ծեծվող մետաղի խուլ զնդացը։ Թվում է, թե այդ բոլորին շունչ ու կենդանություն տվող, լարող ու ձևող մարդն էլ այստեղ միախառնվել, ձուզվել է մետաղյա աշխարհին ու դարձել նրա անբաժանելի կարևորագույն մասնիկը...

Միշտ էլ, ըստ սովորության, Բագրատն առաջիններից է ներկայանում գործառեղը, հանում է բաժկոնակը, հաղնում կապտավուն գողոցը ու կանգնում է հսկայական ալի առաջ կամ շոգեքարշի վրա բարձրանալով՝ զննում է նրա պտուտակները։ Ցեխի պետ Բեսարիոնն արդեն այնտեղ է և ընդունել է օրվա առաջադրանքը։

— Վարպետ ջան, ո՞նց է քեֆդ, էսօր քանի՞ տոկուսով կարող ենք մեր նորմաները կատարել, — ասում է Բեսարիոնը մտերիմ ժպիտով։

— Քեֆս միշտ էլ լավ է եղել, Բեսո ջան, էսօր էլ լավ է, շնորհակալ եմ։ Էսօր էլ կկատարենք ու կգերակատարենք

մեր նորմաները, հեշ մի մտածի, —պատասխանում է Բագա-  
րատն ինքնավստահ շեշտով, բանիմաց մարդու վճռականու-  
թյամբ:

Բեսոն ուրախ է, որ իր ցեխում աշխատում են Բագրա-  
տի նման փորձված վարպետներ, որոնց եռանգում աշխա-  
տանքի շնորհիվ իր ցեխը պլանների կատարման ասպարի-  
զում առաջին տեղն է զրավում և միշտ պարզերես է պա-  
հում նրան դեպոյի կառավարչության առաջ: Կենսուրախ  
մարդ է Բեսոն, մշտաժպիտ, զվարթ: Կարծես թե աշխա-  
տանքը նրա համար ուրախության ու խնդության ծով է, և  
նա տնկաշկանդ լողում է այդ ծովում: Աշխատանքի ժամա-  
նակ ժպիտն անպակաս է նրա դեմքից:

Ու նրա զվարթ երգն ու ծիծաղը զրավում, համակում  
են բնկերներին, ծանոթներին: Բոլորը նրան անկիզծորեն  
սիրում ու համակրում են:

Քառասուն տարի նա ողջունել է արեի ելքը և այնքան  
գոհ է, որ ապրում ու վայելում է աշխարհի բարիքը: Իսկ  
նրա համար աշխարհը շատ է առատ ու բարեբեր: Զարմա-  
նալի կերպով բնությունն այնքան ներդաշնակ է ստեղծել  
նրա հոգեկան ու ֆիզիկական աշխարհը: Նա համաշափ  
կազմվածք ունի, գրավիչ տեսք և գերող, հմայող աշքերի:  
Լույս ու պայծառություն է շարունակ շողում նրա աշքերի  
մեջ, դա նրա կենսուրախ հոգին է, որ այդքան պարզ ար-  
տացոլում է, թափանցում:

Կին ու մի երեխա ունի Բեսոն, նրանք էլ են նրա պետ  
մշտուրախ, և կյանքի զվարթ շունչը սավառնում է ամբողջ  
ընտանիքի վրա:

Բայց այդ մշտազվարթ ու քեֆ սիրող մարդը խստա-  
պահանջ է աշխատանքի ժամանակ: Նա գործի մեջ եռան-  
գուն է, նվիրված: Տասնյոթ տարվա պարտիական ստաժ  
ունի և երբեք չի թերացել կամ ընկճվել պարտիական պար-  
տականությունները կատարելիս: Սովորել է արհեստավորաց  
դպրոցում, մի քանի տարի աշխատել 26 կոմիսարների ան-  
վան մեքենաշինական գործարանում՝ որպես երկաթագործ,

զերջին յոթ տարին աշխատում է գեպոյում և լավ աշխա-  
տանքի համար առաջ է քաշվել որպես ցեխի պետ:

— Օ՛, — բացականչում է Բեսոն ուրախ ժպիտով, — մեր  
չափ տղերքը եկան, հիմի մեր ցեխը կրկին կլարի իր ուժերն  
ու արդերիս դուրս կտանք, իսկ գործից հետո կդնանք մեր  
քեֆին; Հը՛, ինչ ես ասում, Բագրա-տ...

— Իիովին համաձայն եմ, երկու ձեռքով կստորա-  
գրեմ, — պատասխանում է Բագրատը մեքենաների արանքից:

Ներս մտնող Իրակլին, Մացակը, Իվանն ու Սոկրատը  
ստորագրում են հաշվառման գրքով և իսկուն գործի  
անցնում:

— Դե՛մ, տղերք ջան, ես հիվանդ պարավողի վնաս-  
ված տեղերը պետք է բժշկել, հասկացեք նրա լեզուն, վե-  
րականգնեցրե՛ք նրա ուժերը, թող որքան կարելի է շուտ վե-  
րադառնա իր գործին, մեր աղիղ հայրենիքի համար աշխա-  
տելու:

Ընկերներն արդեն ընտելացել են Բեսոյի սրախոսու-  
թյուններին և հաճույքով են լսում նրան: Մի քանի ըստե  
շանցած՝ ցեխումն սկսվում են աղմուկն ու շարժումը, մե-  
քենաները դղրդում են, փոկերը շարժվում, մուրճերը հար-  
վածում, իսկ կրակը ճարճատում ու հևում է հնոցում: Արա-  
գորեն ամրացվում են շոգեքարշի զսպանակները, ոլորվում  
պտուտակները, հնչում է ծեծվող շոգեկաթսան, մաքրվում  
են շոգեքարշի թևերն ու վարի մասերը: Ցեխում սավառնում  
է ստեղծարար աշխատանքի ոգին: Ու մետաղը, ուժեղ դի-  
մագրությունից հետո ենթարկվում է մարդկային կամքին և  
դառնում նրա հլու կամակատարը:

Բագրատը հանում է շոգեքարշի մի պտուտակը, շիկաց-  
նում է հնոցի կրակում, ծեծում է ծանրորեն իջնող մուրճի  
տակ և կրկին ամրացնում իր տեղը: Երկար տարիների փոր-  
ձը նրան դարձրել է հմուտ մասնագետ, վարպետ և նա լավ  
գիտե շոգեքարշի այդ բարդ մեխանիզմի բոլոր մասերը,  
ինչպես հմուտ ժամագործը՝ ժամացուցը: Բարձրահասակ է  
նա, նիհար, տարիները իրենց հետքը թողել են, ակոսել են  
նրա դեմքը, իսկ մազերը նոր-նոր են սկսում ճերմակել:

Մեքենայի մոտ կանգնած՝ նրա մալթինը կարծես մի պատշաճություն ու բարձրություն լինի, խոհուն աչքերով, որոնք լի են օրվա կարևոր հարցերը վճռելու ցանկությամբ: Բեսոն շատ է հարգում ու հավատում նրան: Նա թեսոյի աշխան է, նրա ամենամոտ խորհրդատուն: Բանվորներից ու վարպետներից ոչ պակաս աշխատանք է տանում թեսոն: Նա ամեն տեղ է, շոգեքարշի մոտ, հնոցի առաջ, մեքենաների շրջապատմ: Նա ցեխի աշքն է, արթուն պահակը: Որքա՞ն այրվում, վշտանում է նրա սիրառ, երբ որևէ իր կամ գործիք է կորչում ու փշանում, թեկուզ ամենաշնչին արժողությունը ունենաւ: Դա ահապին հոգս ու վրդովմունք է պատճառում նրան: Աչքի լույսի պես պահպանում է ամենափոքր իրն անգամ մեխ կամ մետաղի կտոր...:

— Էս էլ է պետք, ամեն բան իր տեղն ունի, իր արժեքը, — ասում է նա: Վերցնելով ու պահելով անխնամ ընկած մետաղի կտորը:

Իսկ որքա՞ն ուրախանում է, երբ ամեն ինչ իր տեղումն է, կարգին, աշխատանքն ավարտվում է հաջողությամբ, երբ նորոգված ու մարդու շոգեքարշը հևալով ու փնչալով, ուղարկը զնդացնելով, նոր շունչ ու հոգի առած՝ դուրս է գալիս ցեխից և գնում աշխատանքի:

Թեսոն հանդիսավոր գեմքով ճամփու է գնում նրան, ինչպես ճամփու են գնում բարձր կարգին կամ կոշման արժանացած մարդուն և վերշին անգամ ձեռքը խփելով նրա թիկունքին՝ ասում է.

— Դե, գնա, բալամ, գնա պատվով կատարիր պարտքով գնաս, բայց էլ չհիվանդանաս...

— Բեսո՛, իզուր բժշկություն չես սովորել, պրոֆեսոր չես դարձել, — բացականչում է Սոկրատը կատակով:

— Բա, ինչ ես կարծում, այ մարդ, մենք էլ պարավողի բժիշկն ենք, նրա պրոֆեսորը: Տարբերությունն այն է, որ մեկը մարդկանց է բժշկում, մյուսը՝ պարավողին...

Ընկերները ծիծաղում են այս սրախոսությունից և եռանդով ընդունում շարքից գուրս եկած մի ուրիշ շոգեքարշ:

Իր զվարթ բնավորության հետ միասին կյանքը թեսու-

յին օժտել է ուրիշ հատկություններով էլ՝ պարզություն, անկեղծություն, շիտակություն... Կեղծիքն ու հարամությունը նրա ամենաատելի թշնամիներն են: Կրակ ու բոց է դառնում նա, եթե որևէ մեկի մոտ նկատում է ծուռ գործ կամ հետին միտք:

— Ա՞յս, ես քեզ ինչ ասեմ, անհոգի, անսիրտ մարդք Բա, էղակն կիշացնե՞ն էր ապրանքը, խալիսի աշխատանքով ստեղծված և նրա բարօրությանը նպաստող ապրանքը: Կերած-խմածդդ հարամ լինի, շանսատակ լինես, որ իզն ու թողդ կորչի մեր աշխարհքից...

Իսկ որքան էր ուրախանում, երբ ընկերներն արտադրության մեջ որևէ աշքի ընկնող նվաճում կամ հաջողություն էին ձեռք բերում, նոր գյուտ էին անում կամ ժամկետից շուտ ու բարձրորակ գործ արտադրում: Բեսոն դառնում էր նրանց մտերիմ բարեկամը, ոգեշնչողը:

— Ապրեք, գենացվալե, դոշաղ մարդ եք, իմ ազիտ ախպերներ: Զեզ համար զանս չեմ խնայի...

Դրանք դատարկ խոսքեր չեին: Նա աշխատում էր գործով ապացուցել իր լավ վերաբերմունքը: Հարցը տանում էր արտադրական խորհուրդ կամ կառավարչություն՝ դրամական պարզե, սանատորիայի կամ հանգստի տան ուղեգիր ձեռք բերում կամ էլ գովասանագիր էր բերում առաջավոր ընկերների համար:

Այդ լավագույն հատկանիշների շնորհիվ էր, որ նրան սիրում, գնահատում էին ընկերները, ընտրում էին գործարկումի և արտադրական խորհրդի մեջ, որպես Թբիլսովետի դեպուտատ:

Ընդմիջում է: Ճաշարանի ընդարձակ դահլիճը լցվում է բանվորներով, ինժեներ-տեխնիկական անձնակազմով: Սպիտակ սփոցով ծածկված սեղանների մոտ մարդիկ նստած նախաճաշում են, իսկ անկյունից ուղիղությամբ գործադրություն է հաղորդում: Աշխատավորների մի մասը միջանցքներում կամ բակում խումբ-խումբ հավաքված գրուց են անում:

Երբ Բագրատը մտնում է ճաշարան, փականագործ

Իրակլին մոտենալով թևանցում է նրան և խորհրդավոր ժպիտը դեմքին առաջնորդում առաջին շարքի սեղաններից մեկի մոտ:

— Այ մարդ, էս ինչ հեռու տեղ ես քարշ տալիս ինձ, ինչ խաբար է, — զարմանում է Բագրատը:

— Գնանք, քեզ տղերքը կանչում են, գործարկումի նաշխագիր բան պիտի ասի, — պատասխանում է փականագործը պինդ բռնելով նրա թեր:

Սեղանի շուրջը մի քանի վարպետ ու բանվոր հավաքված ինչ-որ բան են լսում: Գործարկումի նախագահ Քիրիածին լրագիր է կարդում նրանց համար: Երբ Բագրատը մոտենում է, նա ցուց է տալիս լրագրի երկրորդ էջը և հարցում:

— Էս քո տղե՞ն է. լավ, առաջավոր որդի ես ունեցել, Բագրատ, ես չգիտեի:

Բագրատը նայում է իր որդու նկարին և սիրու թըթում է անուշ զգացմունքով:

Քիրկածին բարձրածայն կարդում էր Վարաստանի Գերազույն Սովետի Նախագահության հրամանագիրը՝ Թբիլիսիի շինարարական աշխատանքների մեջ աչքի ընկնող մի շարք ճարտարապետների, վարպետների ու բանվորների պարզեատրելու մասին: Լրագրում տպել են նրանցից մի քանիսի նկարները և մի շարք գովասանական հոդվածներ՝ նրանց նվիրված աշխատանքի առթիվ: Պարզեատրվածների և գովասանքի արժանացածների շարքումն է ճարտարապետ Զավեն Բագրատի Մայիլյանը:

— Տեսա՞ր, Բագրատ ջան, ինչ բարձր պատվի արժանացավ տղեդ, — շնորհավորում են ընկերներն ամեն կողմից:

— Արժանավոր հոր՝ արժանավոր որդի, — ասում է Բիրկածին մտերմաբար խփելով Բագրատի ուսին:

Երջանկության վայլով շողում են վարպետի աշքերը: Նրա արամադրությունը խիստ բարձր է: Այդ վայրկյանին նա այնքան կուղենար տեսնել որդուն, սղմել նրան իր կըրծքին և պինդ-պինդ համբուրել: Ընկերներն ուրախ են և նրա հետ հավասարապես բաժանում են իրենց խնդությունը:

Նախաճաշից հետո ցեխերում վերսկսում է եռում աշ-  
խատանքը: Ընկերներն իրենց դիրքումն են: Բագրատը կոպ-  
տել, ուշադիր զննում է վնասված շոգեքարշի անիվները,  
երկաթակու սոնիներն ու հենակները: Զննում է ու որոշում  
նորոգման ենթակա թույլ մասերը: Մի պահ նա գլուխը  
բարձրացնում է և նայում շուրջը: Նրա դեմքն այնքա՞ն ան-  
դորր է, ներքին խորը բավականության զգացմունքով առլի:  
Որքա՞ն լավ է ամեն ինչ այնտեղ, բոլորն էլ լավ են, բավա-  
կան... Ե՛վ աշխատող մարդիկ, և' արագորեն շարժվող մե-  
քենաները, բարձր լուսավոր առաստաղին ամրացրած փոկե-  
լը, երկաթաձողերը: Իսկ թեժացած կրակը ճամանչում է բո-  
սորափայլ շողերով և արտացոլում պողպատի պսպղուն  
մասերի վրա:

«Հիմի տղիս կարդում է իր մասին գրածը և խորը հուզ-  
մունքով դիտում իր նկարը: Ապրի' տղես, ղոշաղ է: Գործից  
հետո կերթամ տուն և պառավիս կպատմեմ բոլորը, ցուց  
կտամ տղիս նկարը, թող ուրախանա պառավս...» մտմտում  
էր նա խնդալից ժպիտով:

Բագրատի տղայի պարզեատրվելու լուրը տարածվում է  
ցեխում: Բեսոն ուրախ դեմքով առաջ է գալիս.

— Բագրատ ջան, էստեղ քեզ չեմ շնորհավորի, մի  
երեկո տղերանց հետ կպանք քեզ մոտ հյուր՝ քեզ էլ, տղիդ  
էլ աշքալուս կանենք: Դու զինին պատրաստիր, էժան չես  
պրծնի հա՛...

— Աշքիս վրա, տանս դուռը միշտ բաց է լավ ընկեր-  
ների առաջ. համեցե՞ք, — պատասխանում է Բագրատը:

— Մեր վարպետը սրտաբաց, դարդիման մարդ է, նրան  
չես վախեցնի, — միշտամտում է հնոցավար իվանը:

Շատ չեր անցել այդ օրից: Երեք սենյակից բաղկացած  
Բագրատի բնակարանը տոնական տեսք ուներ: Առանձնա-  
պես զարդարված էր երկու խոշոր լուսամուտ ունեցող հյու-  
րասենյակը: Այստեղ նոր աթոռներ ու բագկաթոռներ էին •  
դրված, դաշնամուր կար, պատուհաններին նուրբ ասեղնա-  
գործված վարագույրներ, ծաղկեփնչեր:

Մովթը նոր էր ընկել, սենյակները ողողված էին էլեկ-

տրական լուսերով: Սպիտակ բաճկոնակ հագած Բագրատը  
ստքի վրա էր, մերթ հյուրասենյակում, մերթ միջանցքում,  
մերթ դուրս էր գալիս ընդարձակ պատշպամբ, որ նայում էր  
փողոցի վրա: Այնտեղից երեսում էր քաղաքի մեծ մասը: Փո-  
ղոցի հանդիպակաց կողմը շենքեր չկային, երկաթուղային  
կայարանն էր, և նորակառուց տան չորրորդ հարկի պա-  
տշպամբից բացվում էր մի ընդարձակ տեսարան, որին  
տուանձին հմայք էր տալիս ֆունիկուլյորի բարձունքը, որի  
վրա փայլվիլում էին ճրագները:

Բագրատի մեծ տղան, Զավենը, կապույտ կոստյումը  
հագին նստել դաշնամուր էր նվագում: Երեսուն տարեկան  
բարձրահասակ, բարեկիրթ ձևերով, սև, խոշոր աչքերով,  
լայն ու հարթ ճակատով երիտասարդ էր նա: Աշխատում էր  
քաղաքի շինարարական բաժնում որպես պետի տեղակալ,  
մասնագիտությամբ կառուցող ճարտարապետ: Նրա կինը՝  
Եվգինեն, համարյա նրան հասակակից, ավարտել էր ին-  
դուստրիալ ինդուստրուտը և մարդու հետ աշխատում էր նույն  
Հիմնարկում, նախագծային բաժնում: Ինստիտուտում նրանք  
ծանոթացել էին և ամուսնացել: Ամուսնական կյանքը նրանց  
ընծայեց մի մանշուկ, որ տակավին երեք գարուն էր շնչել:  
Նա ընտանիքի ուրախությունն էր ու զարգը: Նա արդեն  
քել էր մյուս սենյակում:

Բագրատի կինը՝ Շուշանը, մի փոքրիկ, ժիր կին էր:  
Տան տնտեսության մեծ մասն ընկնում էր նրա ուսերին և  
նա կարողանում էր հասցնել: Հարսն ու կեսուրը խոհանո-  
ցում զբաղված էին ընթրիքի պատրաստությամբ, միս էին  
կտրատում, սոխ ու գետնախնձոր կծպում...

Զավենի երկու կրտսեր եղբայրները սովորում էին  
Մոսկվայում, մեկը ուսպմական ակադեմիայում, մյուսը՝  
օդաչուների դպրոցում: Երկուսն էլ լավ թոշակ էին ստանում  
և շարունակ նամակագրության մեջ էին ծնողների հետ: Իսկ  
քույրը՝ Սոնյան, արդեն մարդու էր գնացել և առանձին էր  
ապրում: Նրա ամուսինը՝ Սամվել Արգումանյանը, աշխա-  
տում էր ֆունիկուլյորի Ստալինի անվան նորակառուց  
պարկում, որպես շինությունների պարետ:

Հյուրերին ընդունելու և ներս հրավիրելու պարտականությունն ընկել էր Բագրատի վրա և նա մեծ անհամբերությամբ սպասում էր դռան բախումին: Ահա ներս մտան աղջկին ու փեսան՝ իրենց վեցամյա փոքրիկ աղջկա հետ: Բագրատը մեծ սիրով համբուրեց թոռնիկին և գգվելով տարավ հյուրասենյակը: Սոնյան գնաց խոհանոց՝ մայրիկին ու հարսին օգնելու, Զավենն ու փեսան զրուցի բռնվեցին, իսկ փոքրիկ աղջիկը ձեռքով խաղում էր դաշնամուրի ստեղների հետ:

Բագրատը ջերմությամբ ընդունեց իր գործարանային ընկերներին: Ներս մտան թեսոն, նրա կինը՝ նինան, Բիրկաձեն, Իւլանն ու Սոկրատը:

— Բա են «մոնջին» ինչո՞ւ շբերիք ձեզ հետ,—հարցրեց Բագրատը:

— Մացակի՞ն, հըմ, նա իր ութ երեխաներով շրջապատված արդեն քեֆ է անում, էլ ուրիշ տեղ գնալու հավասշրջնի, — պատասխանեց Սոկրատը կատակի տալով:

Հյուրերը թոթվեցին իրենց ընդառաջող Զավենի ու Սամվելի ձեռքը և տեղավորվեցին թիկնաթոռների վրա:

— Եկել ենք քեզ աշքալուս տալու: Միշտ էղակն պարզերես մնաս, նոր-նոր փառքերի տիրանաս, մենք էլ ուրախանանք և քո խնդությունը հավասարապես բաժանենք, — ասաց թեսոն և թարմ ծաղիկներից կազմած փունջը հանձնեց Զավենին:

Վերջինս խորին շնորհակալություն հայտնեց և ծաղկեփունջը տեղավորեց սեղանի վրա:

Շատ շանցած՝ եկան Զավենի ընկերները՝ քաղաքի շինարարական բաժնի պետ Սերգո Մելաձեն, ճարտարապետ Հրաշյա Պետրոսյանը, տեխնիկ Սիրաձեն և նրանց հիմնարկի աշխատակիցներից Եվգինեի ընկերուհին՝ Քեթոն:

Տեղավորվելով ընդարձակ սեղանի շուրջը՝ հյուրերի շրջանում սկսվեց աշխատյած ու մտերիմ զրուց, որի գլխավոր նյութը Վրաստանի Գերագույն Սովետի վերջին որոշումն էր Թբիլիսիի շինարարության գործում ձեռք բերված աշքի ընկնող նվաճումների մասին և Մելաձեն հանգամանորեն բա-

ցատրում էր գրա հետ կապված խնդիրները, ինչպես նաև քաղաքի հետագա աճման հետանկարները:

— Ինչպես գիտեք, մեր քաղաքը վերջին քսան տարում հիմնովին փոխել է իր դեմքը, մեծացել է, ընդարձակվել, բարեկարգվել: Խոշոր օբեկտներ են կառուցվել և պիտի կառուցվեն, որոնք գեղեցկացրին և էլ ավելի կեղեցկացնեն քաղաքը: Բավական է հիշել Զելյուակինյան կամուրջը, Քոյրավագիսա կառուցումները, փողոցների լայնացումն ու ասֆալտապատած Ստալինի անվան կուլտուրայի ու հանգստի պարկը: Բայց դրանք գեռ բոլորը չեն: Մեր քաղաքն աճելու և առաջ գնալու մեծ հեռանկարներ ունի: Գետի երկու ափով նա առաջ պիտի շարժվի մի կողմից գեպի Զեմո-Ավճալա, վերեկց գեպի Ծղնեթ, իսկ գետի հոսանքն ի վար՝ գեպի Կախեթիայի ու Բորչալոյի դռները: Նորանոր ալգիներ, պարկեր և հրապարակներ պիտի կառուցվեն, մի քանի փողոցներ պիտի լայնացվեն, բարեղարդվեն: Քաղաքը շրջապատող լեռներն ու բարձունքները պիտի անտառազարդվեն, որ կարող է որոշ շափով մեղմացնել ամառային շոգը և մաքրել օդը: Քաղաքի զանազան մասերը մենք պատել ենք և կպատենք գործարանների, ֆաբրիկաների և կուլտուրական հիմնարկների ինիտ ցանցով և մեր երկրի աշխատավորությունը կարող է հապատանալ, որ իր մայրաքաղաքը արդեն դարձել է Սովետական Միության լավագույն քաղաքներից մեկը... Հյուրերն ակտիվ մասնակցություն ցուց տվին զրուցին:

— Քաղաքի շինարարության հետ կապված խնդիրներն անհրաժեշտ է հաճախ քննարկել մեր գործարաններում և բանվորների լայն ժողովներում: Բանվորների դիտողություններն ու առաջարկները ձեզ շատ կօժանդակեն, — ասաց Բիրկաձեն:

— Մենք այդ անում ենք արդեն, մեր պարաիան վաղուց է հրահանգել այդ մասին: Բայց պետք է ավելի հաճախակի դարձնել աշխատավորների հետ մեր զրուցը շինարարության պլանների և հեռանկարների մասին: Դա, անշուշտ, շատ կօգնի գործին, — եղրափակեց Մելաձեն:

Եվգինեն ու Սոնյան Զավենի օգնությամբ պատրաստեցին ընթրիքի սեղանը: Շուտով սեղանը զարդարվեց բազմազան ռւտելիքներով, բանջարեղենով և գինու շշերով:

Երբ Բագրատը բոլորին հրավիրեց և տեղավորեց սեղանի շուրջը, Բեսոն բաժակը լցրեց գինով և ասաց.

— Քուլլ տվեք ինձ առաջին հերթին փորձել մեր բազմաբարիք Կախեթիայի անուշ գինու համն ու հոտք: Չգիտեմ ինչու, ըստ իմ վաստակության, նախ և առաջ էս անմահական հեղուկով պիտի թրջեմ կոկորդս, որպեսզի կարողանամ ընթրե...

Եվ նա դատարկեց բաժակը:

— Մեր Բեսոն էլի սկսեց իր կատակները: Առանց նրան մենք յուշ չենք գնացել ու չենք գնա: Պետք է նրան թամադա ընտրենք, որ մինչև վերջ մեր քերը վառ պահի...

Բագրատի առաջարկությունը միահամուռ հավանություն գտավ սեղանակիցների կողմից:

Հիրավի Բեսոն փորձված թամադա էր: Նա այնպես կառավարեց սեղանը, որ սեղանակիցները բոլորն էլ գոյն մնացին: Զավենի կենացը խմելիս, նա բաժակաճառի համար խոսք տվեց Մելածեին, որը մի քանի խոսքով տվեց երիտասարդ ճարտարապետի բնութափիրը:

— Պորս տարի կլինի, որ Զավենն աշխատում է մեր հիմնարկում, քաղաքի շինարարության ֆրոնտում: Ես հնարավորություն ունեցած մոտիկից ճանաչել նրան, ուսումնասիրել նրա բնավորության գծերը: Աշխատանքի ընթացքում միշտ էլ նա հանդես է բերել բարեխղճություն, ձեռներեցություն: Ինչպես երևում է, որդին արգեն ձեռք է բերել հորդրական հատկանիշները և դարձել նրա լավագույն կերպարը: Պետք է տեսնել Զավենին աշխատանքի պրոցեսում, իր դիրքում, համոզվելու համար իմ ասածների ճշտությանը: Ամբողջ օրը լարված աշխատում է՝ մերթ գրասենյակում, մերթ կառուցողական տեղամասներում: Ինչպես ասում են՝ նրա մոտքը ներսն է, մյուսը՝ դուրսը: Ներսն ու դուրսը միմյանց լրացնում են, ամեն ինչին հասնում է: Իսկ մեր գործը կար-

ծում եք հեշտ է, բազմաթիվ դժվարություններ, խոշխուս-  
ներ կան հաղթահարելու: Բանուժի, շինանյութերի բաշխման  
և օգտագործման խնդիրն այնքան հեշտ չի լուծվում, ամեն  
տեղ և ժամանակին պիտի հասցնել: Դրա համար պետք է  
ունենալ հեղինակություն, կազմակերպչական ունակություն:  
Մենք ունենք նման աշխատողներ, որոնց առաջին շարքերու-  
մըն է Զավենը; Որոնք իրենց ուժերը չեն խնայում արևաշող  
Վրաստանի բարդավաճման համար:

Սեղանակիցների ժպտուն հայացքները կենտրոնացել էին  
Զավենի վրա և նրա կենացին դատարկվում էին բաժակները:

Եվգինեն դաշնամուրի վրա մի քանի ուրախ երգեր նվա-  
գեց: Սեղանակիցները խմբով ձայնակցում էին նրան: Նվա-  
գում ու երգում էին հայկական, վրացական և ոռոսական եր-  
գեր: Սոնցան «Անուշ» օպերայից երկու կտոր երգեց, իսկ  
Սիրածեն երգեց գուրիական հորովել: Նրանց գուրիեկան ձայ-  
նը հաճելի տպավորություն գործեց: Առանձին հաճույք  
պատճառեց նաև «Սուլիկո» խմբերգը: Նինան ու Քեթոն, ինչ-  
պես նաև Պետրոսյանը պարեցին: Հյուրերից ամեն մեկն  
այս կամ այն կերպ ցուց էր տալիս իր շնորհքը և ուրա-  
խացնում բոլորին:

Ուրախությունը գագաթնակետին հասավ, երբ Բեսոն  
հանգես բերեց Շուշանին ու Բագրատին, որոնք միասին  
սպարեցին ընդհանուր ծափերի տակ, դաշնամուրի նվագակ-  
ցությամբ:

— Կեցցե՞ն մեր ծերունիները, մեզանից վատ չե՞ն պա-  
րում, կարող են նույնիսկ ամաշեցնել մեզ: Նոր կյանքում  
Զին սերունդը նույնպես ուրախ է զգում իրեն: Էքստրա՛,  
ծերունիների կենացը,—բացականչեց Բեսոն:

— Ներողությո՞ւն, մենք համաձայն չենք: Մեզ չպետք  
է դասեք ծերունիների շարքը, արխիվ գնալու հեշտ չու-  
նենք: Ես ու Շուշանը դեռ ջահել ենք, ոչ միայն ջահել ենք  
այլ նոր ենք սկսում մեր կյանքը,—հայտարարեց Բագրատը  
և չերմագին համբուրեց կնոջ ճակատը:

Գինին ներգործել էր արդեն, և շատ էր բարձրացրել  
նրա տրամադրությունը:

— Ճիշտ է, ճիշտ է,—բայց կանչություններով սեղանա-  
կիցները ոգևորեցին Բագրատին և քաջալերեցին նրա հայ-  
տարարությունը:

Իսկ Շուշանի ակոսված դեմքին պատկերվեց ամոթխած  
ժպիտը:

Եատ բաժականառեր առաջարկվեցին և սրախոսություն-  
ներ եղան: Հետևյալ օրը կիրակի էր, ուստի չէին շտափում:

Լույսն արդեն բացվել էր, երկնքի լուսաշաղախ դեմքը  
պայծառորեն ժպտում էր, երբ հյուրերը հեռացան: Խորը  
բավականությամբ նրանք գնում էին հանգստանալու:

Այդ օրը քաղաքում տոթ էր: Ամառվա արևն այրում էր  
վերեկից: Կտուրների թիթեղներից անդրադառղ ջերմությունն  
էլ ավելի էր նեղում քաղաքացիներին: Ճաշից հետո և կի-  
րակի օրերը նրանց ամենահամելի զբոսավայրերն են Ստա-  
լինի անվան կուլտուրայի ու հանգստի պարկը և Կոմսո-  
մոլոկայա ծառուղին: Այդ երկու բարձրադիր վայրից հա-  
մարյա ամբողջությամբ պատկերվում է քաղաքը և գեղեցիկ  
տեսարաններ են բացվում:

Կիրակի առավոտ, Մայիլան ընտանիքը փեսայի հրա-  
վերով եկել էր Բերիայի անվան հրապարակը և սպասում  
էր ավտոբուսի: Նշանակված ժամին այնտեղ եկան նաև  
Սոնյան, նրա աղջիկը, Բեսոն և կինը: Մեծ թվով ուղևորներ  
էին հավաքվել այնտեղ: Շուտով նրանք տեղավորվեցին ավ-  
տոբուսների մեջ և շարժվեցին գեպի Կողորի վերելքը: Ճա-  
նապարհը հետզհետե բարձրանում էր և օդը զովանում:  
Մարդիկ թիթեռություն զգացին: Ավտոբուսներն արագորեն  
կտրելով ասֆալտած խճուղու զառիվերը՝ հասան գեղատեսիլ  
պարկը, որ տարածվում էր բարձունքի վրա:

Ավտոբուսները կանգ առան պարկի մոտ, զրոսնողներն  
իշան և ցրվեցին պարկի ծառուղիներում: Մայիլան ընտա-  
նիքն իր ուղեկիցներով գնացին գեպի Սովետական Միու-  
թյան լավագույն շենքերից մեկը, որ նստած է բարձոնքի  
հենց պոնկին և նրա մարմարակերտ պատշգամբները նա-  
յում են Քոի հովանում տարածվող քաղաքի վրա:

Ի՞նչ հիանալի տեսարաններ բացվեցին այդ գեղեցիկա-

տես պատշգամբներից և որքա՞ն զով ու հաճելի էր այնտեղ օդը:

— Այ քեզ հրաշալի զբոսավայր, էս տեսակ գեղեցիկ շինություն կառուցողի ջանին մատաղ, — ասաց Բագրատը և նրանք բարձրացան վերևի պատշգամբ:

Նրանք նստեցին ծղոտե բազկաթուների վրա և սկսեցին դիտել ձորում փուլած տեսարանները: Մեղմորեն սահում էր անուշ զեխյուռը և ջոյում, փայփայում էր նրանց:

— Սա թթիլիսիի աշքն է, նրա հայելին, ամբողջ քաղաքի պեյզաժը պատկերվում է այստեղ, — խորհրդածեց Զավենը:

— Հենց մեզ համար է կառուցած էս գեղեցիկ վայրը, որ գանք, դիտենք, մաքուր օդ ծծենք և վայելենք կյանքի, մեր երկրի քաղցրությունները: Իսկ եթե սրա վրա խորոված և գինի ավելացնենք, ամեն ինչ կատարյալ կլինի, — ավելացրեց Բեսոն և տեղավորվեց Բագրատի մոտ:

Կանայք ու երեխաներն այլելի էին ուրախացել, նրանք մեծ հաճուքքով էին դիտում քաղաքն ու իր շրջակալքը:

Ահա գեղածիծաղ Վրաստանի մայրաքաղաքն իր բազմազան օբեկտներով: Մեջտեղից ոլորվում է Քուրք: Նրա երկու ափերին տարածվում են քաղաքի թաղամասերը: Կարծես մի հակայական ափսե է դրված ընդարձակ հովտում:

— Այս քսան տարվա ընթացքում որքա՞ն է փոխվել մեր մայրաքաղաքը: Ինչ համեմատություն նախկին վորքիկ, հետամնաց և այժմյան եռուն ու բարեշեն քաղաքի միջև: Նայեցե՞ք, Կալյանի վերեւը, Գինավորց Հավաբարը հիմնովին փոխել են իրենց տեսքը: Նախկին Շեյթան-բազարն իսպառ թողել է իր թափթփվածությունն ու մեղկությունը: Գլխավոր հրապարակից անցեք Ռուսթավելու գեղաշեն պողոտան, որի վրա նստած է Սովոնարկոմի սպիտակ մեծ շենքը: Տեսեք ինչպիսի աշխուժություն, շարժում կա փողոցներում, որքան ավտոներ, արոլեյբուսներ են սուրում: Անցեք գետի հոսանքն ի վեր, Սաբուրթալոյի, Վակեի բազմաթիվ կառուցումները դիտեցեք: Դեպի առաջ է ձգվում շարունակ քաղաքը, — բացատրում էր Զավենը:

— Հապա մեր թա՞ղը, Նախալովկա՞ն,—հարցրեց Շուշ  
շանը:

— Մեր տունն էլ է երևում, հրեն կայարանի դիմացի  
մեծ շինքը,—բացականչեց Եվգինեն:

— Պա՞հ, ինչ սուր աչք ունես, Եվգինե, ես մեր տունը  
շեմ տեսնում,—միջամտեց Բագրատն ուրախացած և լարված  
ուշադրությամբ նայեց կայարանի ուղղությամբ:

— Դեպոն էլ է երևում: Իսկ եթե մեր Բագրատի նորու-  
դած շոգեքարշն էլ երևար, լավ կլիներ,—կատակեց Բեսոն:

— Իսկ դիմացի բարձունքներից գենը, երկնքի հեռավոր  
մշուշում էդ ի՞նչ սարեր են երևում, հետաքրքրվեց Եվգինեն:

— Դրանք, սիրելիս, Կովկասյան լեռներն են, ելքրուսի  
ու Կաղքեկի բարձր, ձյունե գագաթները: Հենց նրանք են  
նշանավոր երկնքի կատույտ մշուշում,—պատասխանեց Զա-  
վենը:

Բոլորի հայացքները կենտրոնացան հանդիպակաց բար-  
ձունքներից շատ հեռու, հորիզոնի վրա հաղիվ պատկերվող  
սպիտակ գագաթներին:

Եկավ Բագրատի փեսան՝ Սամվելը: Նա սիրալիր ող-  
ջունեց բոլորին և ասաց.

— Վերջապես հարգեցիք իմ հրավերը և եկաք: Այսօր  
դուք բոլորդ իմ հյուրն եք: Զբոսանքի համար մեզ մոտ հիա-  
նալի է, լավ տեսարաններ կան, կարելի է հաճելի հանդիսա-  
անցկացնել:

Նա հյուրերին առաջնորդեց և մանրամասն ծանոթացրեց  
մարմարակերտ շինության զանազան մասերին, տարավ  
պարկ և ցուց տվեց նրա կանաչախիտ, ծաղկապատ պու-  
րակները:

Հյուրերի վրա առանձնապես խոր տպավորություն գոր-  
ծեց գրանիտից կառուցված Մեծ Մարդու արձանը, որ իր  
խորաթափանց աչքերով հետեւմ էր նրանց, ամրապնդում  
էր, քաջալերում...

Նրանք չէին կշտանում դիտելուց. բացվող տեսարան-  
ներն ու զով օդը հրապուրել էին:

Սամվելը պատմում էր, թե ինչպես մի քանի տասնյակ

տարի առաջ այս բարձունքների վրա խիտ անտառներ են եղել, որտեղ թաքնվել, ապաստան են գտել ցարական ուժիմից դժգոհ ըմբոստ ու հանդուզն մարդիկ, թե ինչպես ցարական կառավարությունը չի կարողացել պայքարել նրանց դեմ, որովհետև աշխատավոր գյուղացիությունը ծածուկ օգնել է նրանց, այդ պատճառով էլ ոստիկանությունն անխնա կտրտել է անտառները և դարձրել ծառազորկ, ամայի լեռնահարթ: Այժմ կրկին ծառագարդվում, կանաչապատվում է այս տեղը և տարեց տարի մեծանում, ընդարձակվում է այս պարկը:

Իշակ ամառային մեղմ երեկոն: Կապուտակ երկնքի վրա պայծառորեն շողացին աստղերու Քոփի հովիտը հրավառվեց բյուրավոր լուսերով, կարծես ներքեռում մեծ հրահանդես էր, լուսահանդես: Լույսերն իշնում էին մինչև ջուրը, արտացոլում նրա մեջ և մագլցում բարձունքներն ի վեր:

— Օ՛հ, ինչ լավ երեկո է, ինչ լույս ու լուսավորություն: Հիմա կարծես ալելի է գեղեցկացել քաղաքը, փառավորվել, — ասում էր Յագրատը երջանիկ ժպիտով:

Երեխաներն անդամ հոգնածություն չեն դպում և լարված հետաքրքրությամբ դիտում էին ձորը:

Բայց ահա նրանք սկսեցին հորանջել և հյուրերը թողնելով Սամվելին բարձունքում, լեռն ի վար իշնող էլեկտրագարշով ներքել իշան:

Այդ հաճելի զբոսանքը նրանց մտքում մնաց որպես պայծառ, անշնչելի հուշ...

## ՄԵՅՐԸ

Իր խնամքին հանձնված կովերը կերակրելով ու շոյելով, Գոհարն եկավ կանգնեց ծիրանագույն, հաղթամարմին կովի մոտ մի պահ հանգստանալու: Կապույտ գլխաշորով, միջահասակ, լայնաթիկունք այդ կինը բոլորել էր քառասունմեկ ամառ, բայց տակավին կայտառ ու թարմ էր՝ տերեների արանքից ժպտացող խնձորի պես: Նրա վրա ընկավ ֆերմայի մեծածավալ գոմի փոքրիկ լուսամուտից անդրադարձող ձմեռային գորշ վերջալուսի աղոտ ցոլքը: Կոթնելով մսուրի հենակալին, սև խոշոր աշքերը հառեց ինչ-որ տեղ և մտքով սլացավ հեռու, հեռու... դեպի հեռավոր ուազմաճակատը, որը մի տարուց ավելի կովում էր իր ամուսինը, որից հենց երեկ էր նամակ ստացել:

«Գոհար ջան, քեզ կյանք ու աշողություն եմ ցանկանում: Երեխոց լավ պահիր: Իմ կողմից մեկ-մեկ համբուրիր բալիկներիս՝ Սիրուշին, Արուսին, Նախշունին, Պայծառին, Վահանին, Տիգրանին, Շուշանին, Շավարշին ու փոքրիկ Ազատին, որ թողի գրկումք: Թող աճեն, մեծանան երեխեքս ու տոնս լցնեն ուրախությամբ: Ես նրանց անուշ արկին մատաղ...»

Գոհարի դեմքը պայծառացավ և սիրոց շերմությամբ լցվեց: Նա որոշեց պատասխանել ամուսնուն, որ հանգիստ լինի, երեխաները լավ են, մեծացել են: Սիրուշն ու Վարդանըն օգնում են իրեն, աշխատում են կոլխոզում: Դյուզում ուշադիր են դեպի իր ընտանիքը, ընդառաջ են գնում: Ամեն

կնչ լավ է, միայն թե շուտ ջարդեր թշնամուն ու ողջ ասողք,  
հաղթանակով վերադառնա երեսաների քով...

Զմուան կարճ օրը մարեց: Գոմում թանձրացավ աղջա-  
մուղը: Պատից կախած ճրագները վառվեցին և սկսվեց  
աշխուժ արարողությունը: Մսուրների առաջ երկշարք կանգ-  
նած կովերը գլուխները դարձրին և մեղմիկ որոճալով դի-  
մավորեցին իրենց մոտեցող կթվորներին:

Մտքերից աղատվելով՝ Գոհարը վերցրեց, ամանը և նըս-  
տեց ծիրանագույն կովի մոտ, զերմորեն մաժեց կաթնապա-  
րար ստինքը և սպիտակ հեղուկն սկսեց հոսել ու փրփրել  
ամանի մեջ: Ի՞նչ խորհրդավոր արարողություն: Անասուն-  
ներն անգամ զգում էին կարծես այդ խորհրդավոր պահի  
իմաստը և գլուխները խոնարհած թույլ էին տալիս քամել  
իրենց հավաքած կենարար հյութը:

Գոհարի դեմքը լուրջ էր, հանդիսավոր, Ով գիտե, քա-  
նի տարի, քանի անգամ նույն ձևով, նույն պահին նստել  
է նա կովի մոտ և քամել բնության պարզմը: Ու ոչ մի բան  
թերևս չկարողանա ավելի զբաղեցնել նրա ուշադրությունը,  
քան միալար թըմքը, այդ միապաղաղ, բայց ախորժելի  
երաժշտությունը:

Գոհարը կաթը տարավ հանձնեց պահեստատուն և վիշ-  
ռագարձավ ախոռ: Այնտեղ նրան սպասում էր Փերմայի  
նախրապան Սահակ քեռին, կթվորներով զբաղացաված:

Նրանք խորհրդավոր ժպիտով նայում էին Գոհարին:

— Գոհար, քեզի լավ լուր մը պիտի ըսեմ. աշքալուս  
պիտի ընեմ. Էն տեսակ բան, որ քեզի փառքի ու պատի  
լույսի մեջ շաղ տա,—ասաց նախրապանը՝ հանդիսավոր  
արտահայտություն տալով ընկուղագույն դեմքին:

— Մինչև Գոհարը մաղարիչ շխոստանա՝ շասես, Սահակ  
քեռի, — բացականչեցին կթվորները այս ու այն կողմից:

— Ինչ բան պիտի լինի որ: Երեկ մարդուց նամակ  
ստացա արդին, էլ ի՞նչ նորություն պիտի լինի, — պատաս-  
խանեց Գոհարը զարմացած:

— Մաղարիչ կանես՝ կըսեմ, թե չէ՝ քուրս, դա հեշտ  
ըսելու ու մարսելու բան չի: Էղ տեսակ բան շատ քշերին

կպատաճի, — համառորեն իր խոսքն առաջ տարավ Սահակ քեռին:

«Յարաբ, ի՞նչ սլիտի լինի...» մտմտում էր Գոհարը շփոթված, աչքերը խոնարհած: Նրա լուրջ ինքնամփոփի դեմքին գարնանային շերմություն էր փայլում:

— Դե՛, գուն էլ, այ կնի՛կ, մաղարիչ խոստացիր, թող Սահակ քեռին ասի, — խորհուրդ տվին կթվորները:

— Դե՛, ասա, Սահակ քեռի. ուզածդ թող մաղարիչ լինի, — պատասխանեց Գոհարը մեղմորեն:

Սահակ քեռին գրպանից հանեց հենց նոր ստացած առագիրը և բարձրածայն կարդաց Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը:

— Քեզ հայտարարել են Սովետական Միության Մայրաքերոսութի, — բացականչեց Սահակ քեռին կարդացած լրագիրը ժալելով ու գրպանը դնելով: Դրանից էլ բարձր սկալի՞վ...

— Հը՞մ, Ճիշտ որ մեծ պատիվ: Ճիմա ամբողջ աշխարհում կտարածվի մեր Գոհարի անունը, — ասաց կթվորներից մեկը:

— Բա հե՞շտ բան է 10 երեխա բերել, նրանց հոգութ քաշել, կերակրել ու միծացնել, — միջամտեց մի ուրիշը:

— Սրանից հետո է՛լի երեխա կբերի Գոհարը, — բացականչեց երրորդը:

— Կբերեմ, է՛լի կբերեմ, թող մի բարով-խերով մարդու վերադառնա, — պատասխանեց Գոհարը և նրա աշքերը շողացին բերկրալից:

1945

## ԼԵՅՏԵՆԱՆՏԸ

Նա կանգնել էր լուսամուտի առաջ ու կիթառ էր նվազում:

Բարձրահասակ էր, բարեձև մարմնով, կարծես թե բնության հրաշալի ձեռքն աշխատել էր ամեն գիծ նրա վրա կառուցել համաշափ, ներդաշնակ: Դեռ նոր էր բոլորեւ քսանհինգ գարուն և երիտասարդական ավյունով լի նրա գեղատեսիլ դեմքը մի սարսուալի թերություն ուներ միայն՝ աշքերը անգույն էին, անկենդան: Նրանց մեջ իշխում էր մի անիմաստ մուայլ դատարկություն... Եվ դրանք, այդ փոքրիկ լուսամուտները մարմնի՝ մութն էին, լուսախն ու կյանքին անհաղորդ: Մի չար ու դաժան ձեռք, տարերային ինչ-որ բան, կարծես թե դիտմամբ զրկել էր նրա աշքերը լույս ու պայծառությունից, որպեսզի աղջատի, ստվերի նրա դեմքի թարմությունն ու գեղեցկությունը: Դուցք գիշերը ցանկացել էր իր մուայլ քողով ծածկել նրա աշքերը, որպեսզի նրանք շվայելեն լույսի և արեի պայծառությունը և հոսահատորն ձգտեն ու շհասնեն այդ երշանկության...

Նա հագել էր հողագույն բարակ բաճկոնակ, կապտավուն շալվար, ոտներին՝ հիվանդանոցային սոլեր: Վրայից կարճ խալաթ ուներ, որի ճերմակ ֆոնի վրա նրա մաքոր սափրած դեմքը մուգ-դեղնավուն արտահայտություն էր ստանում:

Նա լեյտենանտ էր, Հայրենական պատերազմի ակտիվ մասնակից, նրա հերոսներից: Իբր ապացույց՝ կրծքին պըս-

պղում էին «Կարմիր դրոշ» և «Կարմիր աստղ» շքանշան՝  
ները:

«Սև մութ ամպեր ճակտիդ դիզվան,  
Դուման հագար Ալագյաղ...»;

Նա նվագում էր ու մեղմ ձայնով ձայնակցում կիթառին: Քնքուշ էր այդ երգը, մելամաղձուր: Նրա տխուր հընչը լունները տարածվում էին սենյակում: Այնտեղ, միմյանց կողքին երկշարք դրված էին տասներկու մահճակալ: Հիւլանդներից մի քանիսը պառկել էին՝ բութ, անկենդան աշքերը հառած անորոշ կետի, ծխում էին: Նրանցից երկուար անշարժվել էին կոնակին: Մի օր առաջ վիրահատել էին նրանց մի-մի աշքը, որոնք կապած էին ու պաշտպանված նուրբ թաղանթով: Նրանք անհամբեր սպասում էին, թե ե՞րբ բժիշկը կդա ու բաց կանի իրենց աշքը, որպեսզի, հայտնի լինի վիրահատության արդյունքը: Մյուսները նստել էին մահճակալին և լսում էին իրենց ընկերոջ երգն ու նվագը: Բոլորն էլ ջահել էին, գարնան ծաղկած պարտեզում, կենսալից կյանքի շեմքին կանգնած: Բոլորն էլ թշնամու անողոքը հարվածների, գլխավորապես հրանետի զոհեր էին: Միայն մի ծերովկ կար նրանց շարքում, արհեստով հյուսն, որ ուրագ խփելու պահին փայտի կտորը թռել ու վնասել էր աշքը: Մերուկը կողքին պառկած՝ շոյում էր ալեհեր մագերը և երեմն-երեմն հառաշում:

«Սև մութ ամպեր...»

— Լսոնյան, ասա խնդրեմ, ինչո՞ւ ձեր հայկական երգերը այդքան տխուր են, վշտակի, — հարցրեց հիվանդներից մերը:

— Մեր հին երգերը մեծ մասամբ տխուր ու վշտակի են, որովհետեւ հայ ժողովուրդն անցյալում շատ է տանջվել ու շարշարվել օտարերկրյա զավթիչների ձեռքին: Բայց նոր երգերը, ընդհակառակը, կենսուրախ են և զվարթահնչուում, — պատասխանեց լսոնյանը և սկսեց մի ուրիշ երգ երգել ու նվագել:

«Մարի աղջիկ, ա'յ սարի աղջիկ...»

— Ա՛յ, լավ երգ, ուբախ, կենսաթիթիռ, դա շատ լավն  
էր—միջամտեց նոր վիրահատված ընկերներից մեկը:

— Եթե աշքդ գոնե տասը տոկոսով լույս աշխարհ տես-  
նի, քեզ համար մի ուրիշ լավ երգ կնվագեմ, Մանդո՛վ, —  
պատասխանեց Լևոնյանը կիթառը տեղավորելով լուսամուտի  
գողին:

— Ախ, սիրելիս, դու երազ ես պատմում, զրաշքի նման  
բան,—ասաց Մանդովիլը նվազ ձայնով, առանց շարժիկու:

Մանդովիլը ովկրայինացի էր, ավագ լեյտենանտ: Կիւի  
համար մղված կոփիվներում ոռոմքի կտորտանքներից կուրա-  
ցել էին նրա աշքերը: Երեք ամիս պառկած էր այդ հիվան-  
դանոցում, Յիլատովյան շիշովի սրոկումներ էր ընդունում,  
մեջքի միսը միքանի անգամ ծակոտել էին, իսկ աշքերը  
երեք անգամ վիրահատել: Այժմ վերջին փորձն էր, վերջին  
վիրահատում՝ նրան գեթ մի քանի տոկոսով տեսողություն  
տալու հպամար: Քսանվեց մայիս տեսած կենսուրախ տղա էր  
Մանդովիլը, կայտառ, քաղցրախոս: Զնայած երկու աշբով  
կույր լինելուն՝ չէր ընկճառում և կյանքը եռում էր նրա  
երակների մեջ իր ամբողջ թափով:

Սենյակը մտավ վիրահատով պրոֆեսորը՝ իր շքախմբով՝  
երեք բժշկուհի և քույր Մարիա Ալեքսանդրովնան:

Նա մոտեցավ Մանդովիլի մահճակալին և քանդեց նրա  
աշքի վիրակապը:

Կարծես սև վարագուցրը մեկնեն բարձրացավ, խավարը  
փարատվեց և սենյակը լցվեց պայծառ, շլացնող լույսով:  
Նոր աշխարհ եկած մարդու նման Մանդովիլը զարմանքով  
ու հիացմունքով տեսավ պրոֆեսորի բարեժման դնմքը,  
ալեհեր մազերը, տեսավ բժիշկներին, հիվանդներին, ըն-  
դարձակ, լուսավոր սենյակը և արեկի ոսկեշող ճառագայթնե-  
րը... Նրա դեմքին պատկերվեց անհուն ուրախության և  
խնդության ժպիտը...

— Հը, սիրելիս, արդեն տեսնում ես: Ծնորհավորում  
եմ,—ասաց պրոֆեսորը զվարթ ձայնով:

— Տեսնում եմ, պրոֆեսոր, անշափ շնորհակալ եմ,—  
պատասխանեց Մանդովիլը:

Բժիշկներն ու հիվանդներն ամեն կողմից շնորհավորում էին՝ արտահայտելով իրենց ուրախությունը:

Պրոֆեսորը մատների միջոցով որոշեց Մանդյուկի տեսլության չափը:

— Հրաշալի է, արդեն ութսուն տոկոսով տեսնում եմ: Մի քանի օրից լրիվ կտեսնես: Միայն համբերություն ունեցիր, — ասաց պրոֆեսորը և կրկին կապեց հիվանդի աշքը:

Նա այնքան ուրախ էր, որ իր բժշկությունը հաջող արդյունք էր տվել: Բայց Զուբովի աշքի վիրահատումը նվազ հետեւանք էր ունեցել: Նա շատ քիչ էր տեսնում: Մի քանի տոկոսով միայն:

— Անհրաժեշտ է երկրորդ անգամ վիրահատել: Մի վհատիր, սիրելիս, ես ամեն միջոց ձեռք կառնեմ, որ ավելի լավ տեսնես, — արտապնդեց պրոֆեսորը և իր շքախմբով հեռացավ սենյակից:

Մարիա Ալեքսանդրովնան մնաց Զուբովի աշքը կապելու:

— Ո՞հ, ի՞նչ անբացատրելի և անսահման երջանկություն: Ես արդեն տեսնում եմ: Կեցցե՛ մեր պրոֆեսորը, կեցցե՛ մեր սիրելի հայրենիքը, մեծ Ստալինը, — ասաց Մանդյուկը և շարունակեց, — որքան ուրախ եմ, որ կարող եմ տեսնել Մարիա Ալեքսանդրովնայի սքանչելի դեմքը:

Մարիա Ալեքսանդրովնան արծաթահնչյուն ձայնով ծիծաղեց: Հստ երկութին նրան շատ գուր եկավ Մանդյուկի խոսքը:

Լուսնյանը շոշափելով մոտեցավ Մարիա Ալեքսանդրովնային և ասաց.

Երանի ես էլ Մանդյուկի պես կարողանայի տեսնել լույս աշխարհը և վայելել հրաշալի կյանքը: Տեսնել նաև ձեր ազնվակայլ գեմքը, Մարիա Ալեքսանդրովնա...»

— Կտեսնեք. մեր պրոֆեսորի անունը հռչակված է անբողջ աշխարհում: Նրա ձեռքը հրաշագործ է: Նա ձեզ բոլորիդ լույս կտա: Մեր երկիրը երբեք չի մոռանա ձեր հերոսական գործերը, անձնվիրությունը...

Մարիա Ալեքսանդրովնային կանչեցին և նա շտապեց  
գուրս:

Լևոնյանը պառկեց իր մահճակալին: Շուտով նա խո-  
րասուզվեց մտքերի մեջ, որոնք ամեն կողմից շրջապատե-  
ցին նրան: Նա մտքով փոխադրվեց իր ծննդավայրը, հայրե-  
նական տունը, վերհիշեց մանկությունը: Շատ վաղուց, փոքր  
հասակից նա կորցրել էր ծնողներին և մնացել հորեղբոր  
խնամքի տակ: Վերջինս նրան ուղարկել էր դպրոց, որտեղ  
և ստացել էր միջնակարգ կրթությունը: Հորեղբայրը գրա-  
շար էր, մեծ ընտանիքով ծանրաբեննված:

Միջնակարգ դպրոցը գեռ նոր ավարտած՝ բռնկվեց  
Հայրենական մեծ պատերազմը: Լևոնյանը մտավ Կարմիր  
Բանակի շարքերը և մեկնեց ուազմաճակատ: Այնտեղ նա  
ցուցաբերեց հնարիամտություն և խիզախություն: Առաջ քաշ-  
վեց միջնէ լիյանանտի աստիճանը:

Հետախուզական դասակն էր ղեկավարում և ակտիվ  
գործողություններ կատարում թշնամու թիկունքում: Գնդի  
Հրամանատարը հավատում ու սիրում էր նրան և միշտ  
պատասխանատու հանձնարարություններ էր անում: Երկու  
անգամ վիրավորվեց թերից ու ոտքից, պառկեց զինվորական  
հիվանդանոցում; բռւժվեց ու կրկին մեկնեց ուազմաճակատ:

Որքա՞ն բարձրացավ նրա տրամադրությունը, ուրախու-  
թյամբ լցվեց սիրտը, երբ թշնամին սկսեց նահանջել: Սա-  
կայն Դնեպրն անցնելիս, նրա հետ պատահեց վերջին և այս  
անգամ ավելի մեծ դժբախտությունը: Ռումբի բեկորները  
վիրավորեցին գլուխը և խոցեցին աչքերը: Նա զրկվեց ամե-  
նաթանկագին բանից՝ աշքի լույսից: Դարձյալ նրան տարան  
հիվանդանոց, ուր պառկեց մոտ վեց ամիս: Թեև գլխի վեր-  
քերը լավացան, բայց աչքերը մնացին խալար...

Հորեղբայրն իմացավ այդ մասին, տեսության եկավ:  
Այդ ժամանակ նրան փոխադրել էին Օդեսայի աշքի հիվան-  
դանոցը: Թողնելով նրան հիվանդանոցում՝ հորեղբայրը կըր-  
կին վերադարձավ իր գործին:

Եվ այժմ Լևոնյանը թեև ոչ մի ցավ չէր զգում, վերքերն  
արդեն բուժվել, սպիացել էին, թեև նա կարողանում էր

քայլել, ազատ շարժումներ գործել, համարյա վերականգնվել էին նրա ուժերը, բայց հոգեպես տանջվում էր. Նրան զբաղեցնում էր այն միտքը, թե արդյոք կկարողանա՞ դարձյալ տեսնել լույս աշխարհը, կրկին վայելել կյանքի քաղցրությունը: Արդյոք հնարավորություն կունենա՞ աշխատել, շարունակել զինվորական ծառայությունը, օգտակար լինել երկրին, հայրենիքին: Զէ՞ որ նրա երակներում եռում էր աշխատանքի, կյանքի ուժը: Իսկ կյանքն այնքան լավ է, այնքան բաղձալի: Իր մեջ այնքան եռանդ կա, կենսունակություն՝ փարվելու կյանքին և ձուլվելու նրան...

Մյուս հիվանդանոցներում կեռնյանը, չնայած անտանելի ցավերին, հոգեպես հանդիսաւ էր, վատահ էր, որ վերքերն անվտանգ էին, բուժելի: Նա կրկին կկարողանար վերադառնալ շարքերը և մասնակցել հայրենիքի պաշտպանության դործին, աշխատանքին, կյանքին: Բայց հիմա նա իրեն զգում է մի մութ, խավարամած վայրում, անորոշության մեջ: Արդեն երկու անգամ վիրահատել էին աշքերը: Աշ աշքը բոլորովին վնասված լինելով լուսագունդը հանել էին և փոխարինել արհեստական ապակե ալքով: Մնում էր վերջին փորձը՝ ձախ աշքի տեսողությունը որոշ շափով վերականգնելու համար: Ահա նրա միակ հույսը, որ ոգեանգում էր նրան: Ի՞նչ պիտի լինի հապա իր վիճակը, եթե այդ հույսն էլ ապարդյուն անցնի: Ի՞նչ աճավոր դժբախտություն... Մի՞թե նա չպիտի կարողանա օգնել երկրին, հայրենիքին, թեթևացնել ընտանիքով ծանրաբեռնված հորեղբոր հոգսերը: Մի՞թե նա չպիտի տեսնի ու վայելի այս սքանչելի աշխարհը, լույսը, արևը, բնությունը...

Նա վերհիշեց իր հայրենի քաղաք Երևանը... Որքա՞ն փրխվել, գեղեցկացել է հիմա իր ծննդավայրը: Նոր ու լայն բարեշեն փողոցներ, խոշոր տներ, ծառազարդ ու կանաչավետ պուրակներ և կյանքը, որ հարաճուն շարժվում, եռում է այնտեղ: Հապա իր գպրոցական ընկերնե՞րը: Ինչ եղան արդյոք նրանք: Նա մեծ սիրով մտարերեց իր դասընկերներին, ուրախ կատակներն ու արկածները ընկերական կյանքից: Մեկ մեկ հիշեց բոլոր ընկերների զանազան առանձնա-

Հասկությունները: Իսկ աղջիկնե՞րը, նրանց հետ ունեցած հանդիպումնե՞րը, ուրախ զրուցներն ու քրքիջնե՞րը: Այնքան քաղցր էին, հոգեթով, մտերիմ: Կարծես այժմ էլ իր ականջին հնչում են նրանց զրնգուն, կենսուրախ ձայները: Հապա Քնարի՞կը... Չէ՞ որ այդ աղջիկն այնքա՞ն դար էր դալիս իր սե, խոշոր, միամիտ աշքերով, համեստ ու հաճելի բնավորությամբ, գեղի ուսումն ունեցած անհուն սիրով: Արդյոք ի՞նչ է անում հիմա Քնարիկը: Վազոց է մի տեսել: Ռազմաճակատ գնալոց հետո էլ լուր շատացավ նրանից: Արդյոք շարունակո՞ւմ է ուսումը, ի՞նչուս է դասավորվել նրա կյանքը:

«Արդյոք Քնարիկը գիտե՞ ինձ հետ պատճառ դժբախտության՝ մասին: Առաջ նա այնպես էր հետաքրքրվում, այնպիսի մտերմությամբ և անկենդությամբ էր վերաբերիում դեպի ինձ: Եթի իմանա, որ ես գտնվում եմ այս վիճակում, զուցե բոլորովին սառի, մոռանա ինձ: Ել մի՞թե կարելի է մեղադրել նրան դրա համար...»

Լևոնյանը խսրը հառաջեց և շուր գալով դեմքը թաղեց բարձի մեջ: Այդ պահին նա այնքան էր ուզում արտասվել և հանդստացնել իր դառնացած սիրու: Ամբողջ կյանքում դեռ երբեք նա այդքան պահանջ չէր զգացնել արատավելու: Բայց նա չկարսղացավ արտասվել, թիթենացնել իր ծովացած, դառնացած հոգին: Ասենք ո՞րտեղից պիտի հոսեին արտասների կաթիլները: Քանդված և ավերված աշքերից: Նրանք մռալ էին, անթափանց: Ու ոչ ոք պալաւառում չկարողացավ իմանալ, թե այդ պահին ինչ հոգեվիճակ էր ապրում Լևոնյանը:

Ճաշի ժամանակն էր: Հիվանդները պալատներից դուրս եկան, սեղանատանը շոշափելով գտան աթոռները, տեղավորվեցին սեղանի շուրջը և սկսեցին ճաշել: Մանդյակն ու Զուբովը պալատում ճաշեցին, իրենց անկողնում: Իսկ Լևոնյանը պառկած մնաց, ուտելու ախորժակ շոմեր:

Տնտեսութին առաջարկեց նրան գնալ սեղանատուն:

— Ես կուշտ եմ, նատալիա իվանովնա: Ոչ մի բանի

կարիք չեմ դդում,—ասաց Լևոնյանը առանց գլուխը բարձրացնելու:

— Երեկ Արմենակն էնքան կուշտ կերավ, որ կերածն հերիք կանի էսօթ ու վաղը, գուցե և մյուս օրը: Այժմ երնի սիրած ազջիկը միտն է ընկել, ախորժակը փակվել է: Կարսուց այրվում է խեղճը,—միշտամուց Մանդյուկը:

— Չեմ հասկանում, սա ի՞նչ համառություն է,—ասաց Նատալիա Իվանովնան և դորս գնաց:

— Կատակը մի կողմ, Արմենակ, ինչո՞ւ չես գնում ձաւելու,—Հարցրեց Մանդյուկը:

— Հենց չնպես, ախորժակ չկա...

Սեղանատնից վերադարձան հիվանդները, պառկեցին իրենց տեղերը հանդստանալու: Պալատում տիրեց լուսություն:

Լևոնյանը կրկին ընկումվեց մտքերի ծովը:

Սեղակս ուրեմն, Քնարիկն էլ կմոռանա իցեն: Կենսավառ ուժերով լի իր ծաղկե երիտասարդությունը կմաշվի, կգնա: Ինչո՞ւ, ինչ մեղքի համար: Եվ նա այնպիսի խորը զայրույթով և ատելությամբ ողմեց ատամները, ձեռները դարձան բոռնյշք սպանալից: Այնպիսի անզուսալ ցանկություն գգաց գարճալ նետվելու կովի մեջ, թշնամու դեմ, որ պատճառ եղավ իր գժեախտության: Արդյոք հիմա ո՞րտեղ է և ի՞նչ է անում իր դասակը: Ախ, իր հանդուզն ու խիզակու ընկերները՝ սերժանտ Մբատյանը, բանակայիններ՝ Միսակը, Ասքանազը, Իվանովը, Յարցելը և մյուսները: Որքա՞ն կարուել է նրանց: Զէ՞ որ միասին թշնամու գժեմ նաև ապրել, անվեհերության և խիզախության անմահ վայրկաններ: Զէ՞ որ միասին խորամանկ ծրագրեր են պատրաստել ու գավերւարել թշնամու դեմ, նրա թիկունքում: Որքա՞ն են ուրախացել ու հրճվել դրանց հաջող իրագործման համար:

Իրիկնապահին հիվանդները վեր կացան: Մի քանիսը գնացին միշանցք, մի քանիսը մոտեցան լուսամուտին, նըստեցին Լևոնյանի մահճակալին, անթիկունք աթուներին, սկսեցին ծխել և զրուցել: Եկան նաև մյուս պալատների հիվանդներից: Բոլորն էլ ջահել, մեկը մյուսից կայտառ:

պարնան թարմ շունչն ըմպած: Այնտեղ էր Ուկրաինայի խորքերից եկած երկու աշբով կուլը Սիդերյուկը, Հեռավոր Արևելքից, Խաբարովսկից՝ մեքենավար Գորյաչկինը, Մենդրելիայից եկել էր սերժանտ Դոնդուան, Մինսկից՝ ուսանով կինկեհլը և ուրիշները: Ասոնյանը նստեց անկողնում և սկսեց նվագել կարմիր բանակային մի ուղղմական երգ: Շուտով Գորյաչկինը իր բարձր ուժին ձայնով ձայնակցեց նվագին: Նրան միացան ընկերները տարբեր ձայներով և պալատում հնչեց մի հզոր խմբերգ մարտական շեշտով: Ամբողջ պալատը թնդաց այդ երգի հզոր ալիքներով: Հիվանդները ոդեշվեցին, արիացան:

Մի խմբերգին հաջորդում էր մյուաք: Երգում էին ուաղմաշոնչ երգեր: Բոլորի տրամադրությունն էլ բարձր էր, կորովի: Նրանք մոռացել էին իրենց վիճակը, շրջապատը, Հիվանդանոցային ուժիմը:

Ուշ երեկոյան հերթապահ բժշկուհին եկավ, որ առաջարկի երգողներին քնել: Նա կանգնեց դռան մոտ և սիրտ շարավ առաջ գնալ, այնքա՞ն ներշնչված, այնքա՞ն հուզիչին երգում տղաները: Նա կրկին վերադարձավ հերթապահական սենյակը, իսկ հիվանդները շարունակեցին իրենց երգը: Խմբական այդ ոգեշշոնչ երգերը մարեցին այն ժամանակ միայն, երբ երգիշները հոգնեցին և գնացին քնելու:

Ասոնյանը պառկեց անկողնում: Նա դեռ գտնվում էր մարտական երգերի զորեղ աղղեցության տակ և իրեն զգում էր ամրապինդ, ուժեղ: Կարծես թե մի հզոր, անխորստակելի բան էր կանգնած թիկունքին, անառիկ ամրոց, անսասան ուժ, որ նրան ներշնչում էր հալատ, լավատեսություն...

Հետեւյալ օրը նրան տարան ու կանգնեցրին խոշոր ուժանք մագնիտի առաջ, որի ուժով փորձում էին տեղահանել կամ առավել անվնաս դարձնել աշբերի խորքերում թագնված երկաթի կտորները: Նրա դեմքը խեցգետնի պես կարմրել էր, ինչոր ուժ նրան քաշում էր առաջ, դեպի առաջ: Այդպես նա մնաց մի քանի բոսկ էլեկտրականացած, մագնիսացած վիճակում...

Երեք օր հետո նրա աչքը վիրահատեցին: Երբ բժիշկը

Երկու անողորմ սրսկում կատարեց Հոնքի տակ՝ աշքն անպայցնելու համար, սաստիկ ցալից նա ծպտուն շարձակեց, ատամները սղմեց և դիմացավ։ Նա պատրաստ էր ամեն փորձության, միայն թե վերականգնի տեսողությունը, զոնե որոշ չափով տեսնի մարդկանց, առարկաները, աշխարհը... Սակայն վիրահատումն ցանկալի արդյունք չտվեց։ Ռումբի մանրուժները խիստ վնասել էին նրա աշքի լուսաթաղանթը և հազիվ հնարավոր եղավ շատ նվազ չափով վերադարձնել տեսողությունը։ Նա հազիվ էր նշմարում իր շուրջը, տեսնում մարդկանց, լուսավոր վայրում տարբերում առարկաները։ Նրա սիրտը լցվեց ուրախությամբ։ Անհուն կարոտով ու ցնծությամբ լուսամուտից նայեց արկին, երկնքին և պայծառացավ նրա դեմքը։

«Որքան երջանիկ են մարդիկ, որ տեսնում են, վայելում արեի, լուսի, բնության գեղեցկությունները։ մտածեց նա։

Նրա աշքի վերքը շուտով լավացավ, անկողնից վերելավ, սկսեց քայլել, վիրակապն էլ քանդեցին։ Շուրջն աղոտ էր, մշուշոտ։ Նա չէր կարողանում ճանաչել մարդկանց, որոշել նրանց դեմքի գծերը։ Գրել-կարդալ չէր կարող։ Այդ վիճակով հնարավոր չէր մենակ, առանց ուղեկցի վերադառնալ տուն, մտնել զինվորական շարքերը կամ ուրիշ գործով դբաղվել, աշխատել։ Ի՞նչպես պիտի դասավորվի նրա կյանքը, ապագան... Ո՞նց ստեղծի ընտանեկան երջանիկ կյանք։ Ի՞նչպես օգտակար լինի երկրին, ժողովրդին...»

Մահմակալին կամ լուսամուտի մոտ նստած անձնատուր էր լինում մտքերին։ Երբեմն ընկնում էր նրա տրամադրությունը, ընկճվում, հուսալքվում։ Բայց, երբ նվագում էր, ընկերները երգում էին, երբ լուսամուտից նայում էր կապտաշող երկնքին և արկի պայծառ շողերին, դարձյալ բարձրանում էր նրա տրամադրությունը, ամրապնդվում, ոգեշնչվում։ Նա խորապես զգում էր, որ ինքը մենակ չէ, իր թիկունքին կանգնել է մի հսկայական անխորտակ ուժ՝ հայրենիքը... Հայրենիքը չի թողնի, որ նա կորչի կյանքի հորձանքում։ Հայրենիքը կպահի, կփայլիայի նրան հարազատ մոր պիս...

— Ակոնյա՞ն, նամակը ունես, —բացականէց տնտեսու-  
հին սենյակը մտնելով:

«Նամակ...» մտմտաց ինքնիրեն կեռնյանը ծանր մըտ-  
քերից ուշքի դալով, կարծես խորը քնից զարթնելով:

Տնտեսուհին նամակը հանձնեց նրան և ասաց.

— Հայերեն է գրած, ով պիտի կարդա քեզ համար:

Կեռնյանն այնքան չէր տեսնում, որ կարողանար կար-  
դալ: Իսկ հիվանդանոցում հայերեն կարդացող չկար, ինչ-  
պէ՞ս պիտի կարդային հապա:

«Երդյոք ո՞վ է գրել այս նամակը, հորեղբայրս, թի՝  
ընկերներից մեկը». մտածում էր կեռնյանը անհուն հետա-  
քրքրությամբ լցված:

Տնտեսուհին վեցցրեց նամակը, նայեց ծրաբին և ներ-  
քեռում կարդաց նամակն ուղարկողի հասցեն ուսւերեն լեզ-  
վով գրած:

«Երեան, Նալբանդյան փողոց №... Քնարիկ Մանուկյա-  
նից»:

«Մանուկյան Քնարիկ...» ասաց կեռնյանը շփոթված,  
զարմացած: Կարծես թե սիրալ պոկլուց տեղիցը, քարացավ,  
անշարժացավ: Անսպասելի էր նրան այդ նամակը: Հուզ-  
մունքից շառագունել, կարմրել էր գեմքը:

— Կի՞նդ է, թե քույրդ, — հարցրեց տնտեսուհին նամա-  
կը կրկին հանձնելով նրան:

— Ոչ մեկն ունեմ, ոչ մյուսը, — պատասխանեց կեռ-  
նյանը:

— Պարզ է ուրեմն, թե ով է գրողը, սիրած աղջիկը, —  
միջամտեց Մանդուկը:

Տնտեսուհին խոստացավ հայերեն իմացող գտնել նա-  
մակը կարդալու համար և գուրս գնաց:

Նամակը մեծ հետաքրքրություն առաջ բերեց հիվանդ-  
ների շրջանում: Նրանք գլխավորապես եկվորներ էին, հեռա-  
վոր վայրերից, դրա համար էլ նամակը կամ հեռագիրք  
ահապին տպավորություն էր գործում, ոգևորություն առաջ  
բերում նրանց մեջ: Նրանք զանազան հարցեր էին տալիս  
նամակ գրողի անձնավորության մասին, բայց կեռնյանը

չէր կարող սպառիչ պատասխան տալ, որովհետև առաջին անգամն էր Քնարիկից նամակ սաւանում և դեռ իրեն հայտնի չէր բովանդակությունը:

Գիշերը Լևոնյանի միտքն զբաղված էր նամակի բովանդակությամբ: Արդյոք ինչ է գրում Քնարիկը: Շատ տարիների ծանոթներ են նրանք: Միշնակարգ դպրոցի առաջին պատրանից մինչև ավարտելը միասին են սովորել և միշտ լավ է եղել իր հանդեպ, ուշադիր: Նա հիշեց բազմաթիվ հետաքրքր մոմենտներ մանկական, պատանեկական կյանքից, որոնց մեջ տռանձին տեղ էր գրավում այդ աղջիկը: Որքա՞ն պարզ ու զինջ էին մանկության և պատանեկության օրերը: Ի՞նչ մշտածիծաղ ու զվարթաշունչ կյանք: Երազի պես էին թվամ այդ օրերը, ոսկեղեն անուրջներ: Որքա՞ն որպախություն ու հրճվանք... Հետո պատերազմ, արյուն, մարմնական ու հոգեկան բոլոր ուժերի լարումն թշնամուն հաղթահարելու համար: Զնայած պատերազմի շրջանում իր զլատովն անցած սարսափելի դեպքերին, Լևոնյանը դարձյալ նույն միամիտ պայծառ տղան էր, ինչպես հինգ տարի առաջ, թեև նա խիզախ էր, հանգուգն, անբասիր... եվ նրա սրտում արագահոս ու վճիռ զրերի պես հորդեցին զգացմունքները:

«Արդյոք ի՞նչ է գրում Քնարիկը, ի՞նչպե՞ս հիշեց ինձ: Անշուշտ հորեղբայրս է տվել իմ հասցեն և նրան պատոմել ինձ հետ պատահած դժբախտությունը: Դպրոցում սովորելիս Քնարիկը շատ անգամ է եղել մեր տանը: Նա ծնողներ շուներ, ապրում էր մեծ քրոջ մոտ, Տերյանի անվան փողոցում: Հիմա նոր հասցե ունի: Արդյոք ամուսնացե՞լ է, թի՞ մենակ է ապրում: Արդյոք ի՞նչ փոփոխություններ են կատարվել նրա կյանքում: Բայց ի՞նչ սոսկալի բան, որ ևս չեմ կարող կարդալ նամակը: Գույք Քնարիկն այնպիսի բաներ է գրել, որ անհարմար է ուրիշներին իմանան...»

Ինչպես անցավ գիշերը: Ոնց բացվեց երկնքի գեմքը և կամաց-կամաց պայծառացալ: Լևոնյանը վեր կացավ, հագնեց և նստեց մահճակալին: Նրա վրա թափվեցին նորածագ տրեկի ոսկեփայլ շողերը: Անհանգիստ էր, սպասողական

դրության մեջ; Մյուս ընկերներն էլ վեր կացան և պալատում շարժվեց, աշխուժացավ կյանքը:

Հեռնյանի ուշադրությունը միշտ դեպի դուռն էր, կարծես այնտեղից էր գալու իր ուրախությունը, երջանկությունը...

Շուտով եկավ տնտեսուհին իր հետ բերելով մի հայուհու, որ իր հարևանուհին էր: Վերջինս թեև երկար ժամանակում էր Օդեսայում, բայց չէր մոռացել մայրենի լինում:

Հեռնյանը նստեց լուսամուտի գոգին և լարված ուշադրությամբ լսում էր: Նամակում գրված էր.

### «Թանկագին Արմենակ»

Գուցե զարմանաս ստանալով այս նամակը: Չէ՞ որ դպրոցն ավարտելուց հետո հեռացանք, ընկերներից ամեն մեկը դեռ ու դեն ցրվեց: Ոմանք գնացին պազմաճակատ, ոմանք շարունակեցին ուսումը բարձրագույն դպրոցներում, ոմանք էլ ամուսնացան, ընտանիք կազմեցին, աշխատում և ապրում են իրենց համար:

Մի կարծի, որ ես մոռացել էի քեզ: Հորեղբորդ հանդիպելիս՝ միշտ հարցնում, հետաքրքրվում էի քո մասին: Վերջին անգամ նա ինձ հաղորդեց քո մեծ դժբախտության մասին: Հայրենական պատերազմի ընթացքում գու կորցրել ես տեսողությունդ... Ծածանը տպավորություն թողեց ինձ վրա այդ լուրը: Անշատ տիսրեցի ու վշտացաւ: Հիշեցի մեր մանկության ու պատանեկության լավագույն օրերը, հիշեցի քեզ և պինդ արտասկեցի... Բայց այն միտքը, որ գու քո աշքերիդ լույսը կորցրել ես մեր մեծ ու սիրելի հայրենիքի համար մղվող կյանքի ու մահվան կը վում, բարձրացրեց իմ տրամադրությունը և հուսադրեց ինձ: Դու քո թանկագինը, ամենալավը զոհել ես մեր հայրենիքի համար: Դրանով դու այնքան բարձրացար իմ աշքում, դարձար այնքան պաշտելի ու

նվիրական; Խոսք չեմ գտնում պատմելու իմ հիաց-  
մունքը քո անսահման խիզախության ու հերոսության  
համար... Հորեղբայրդ հույս ունի, որ որոշ չափով  
կվերականգնվի տեսողությունդ; Ի՞նչ լավ կլիներ,  
եթե հաջողվեր:

Հիմա մի քանի խոսք իմ մասին:

Դպրոցն ավարտելուց հետո ես շարունակեցի  
ուսումն և մանկավարժական բարձրագույն կրթություն  
ստացաւ: Այժմ, ահա, երկու տարի է ինչ աշխատում  
եմ որպես մանկապարտեզի վարիչ: Թեև ամուսնա-  
ցած չեմ, բայց ինքնուրուցն կյանք եմ ստեղծել ինձ  
համար: Այլևս քողու մոտ չեմ ապրում: Առանձին-  
սենյակ ունեմ իր հարմարություններով՝ պատշգամբ,  
սրահ, խոհանոց:

Հորեղբայրդ հայտնեց, որ շուտով պիտի գա  
Օդեսա՝ քեզ բերելու: Խնդրեցի, որ թույլ տա ես գամ  
ու քեզ բերեմ Երևան: Հորեղբայրդ աշխատում է,  
զբաղված է, իսկ ես արձակուրդումն եմ, աղատ եմ,  
հնարավորություն ունեմ դալու և քեզ օգնելու: Հո-  
րեղբայրդ շատ ուրախացավ և համաձայնվեց: Այժմ  
գա կախված է քեզանից, եթե համաձայն ես, գրիր  
կամ հեռագրիր, ես իսկույն կգամ և քեզ կբերեմ  
ինձ մոտ: Ինչ գրության մեջ էլ լինեն աշքերդ, ես  
հոժար եմ քեզ ընդունելու ինձ մոտ: Մենք միասին  
կապրենք, մեզ համար նոր կյանք կստեղծենք: Ես  
վստահ եմ, որ իմ այս որոշումը մեզ համար կստեղ-  
ծի ընտանեկան խաղաղ, երջանիկ կյանք: Եթե միայն  
ցանկանանք և ձգտենք դրան:

Այս նամակն արտահայտում է իմ վերջնական  
որոշումը: Անհամբեր սպասում եմ քո պատասխա-  
նին:

Քո մասին մտածող և քեզ սիրող Քնարիկ»:

Նամակի բովանդակությունն այնքան խորը տպավորու-  
թյուն գործեց կեռյանի վրա, որ շգիտեր ինչ աներ, ինչպես

Հնորհակալություն հայտներ նամակը կարդացող հայուճունն  
զերջինս նամակը դրեց ծրարի մեջ, հանձնեց նրան և ասաց.  
— Եթե ուզում եք պատասխանել, ես պատրաստ եմ  
օգնելու ձեզ: Թելադրեցեք՝ ես կդրեմ:

Լևոնյանը մի պահ տատանվեց, չեր իմանում ինչ պա-  
տասխանի: Դեպի վեր, անորոշ կետի ուղղված նրա դեմքն  
արտահայտում էր՝ անհուն, անբացատրելի հուզմունք:

Հայուճուց իմանալով նամակի բովանդակությունը՝ տըն-  
տեսուհին հաղորդեց հիվանդներին, որոնք ուրախացան և  
շնորհավորեցին Լևոնյանին:

— Իսկուն պատասխանիր, որ համաձայն ես, Արմե-  
նակ, մի տատանվիր, բացականչեց Մանդյուկն ուրախ ձայ-  
նով:

— Դրանից լավ բա՞ն: Հեռագրիր, որ այդ աղջիկը  
գա, — իսորհուրդ տվին ընկերները:

Լևոնյանը վերջնական որոշումը կայացրած մարդու  
վճռականությամբ նամակը սղմեց ձեռքում և ասաց.

— Նատալիա Իվանովնա, շատ եմ խնդրում, իմ անու-  
նից տալ հետեւյալ հեռագրիրը.

«Երեան, Նալբանդյան փողոց №... Քնարիկ Մանու-  
կյանին: Համաձայն եմ, խնդրում եմ գալ ինձ տանե-  
լուած:

Տնտեսուհին և հայուժին գնացին հեռագրատուն՝ կա-  
տարելու Լևոնյանի խնդիրը:

— Դե, հիմա կարող ենք շնորհավորել, — ասացին ըն-  
կերները հավաքվելով Լևոնյանի շուրջը:

— Մաղարիք քեզ վրա լինի, — ասաց Գորյաչկինը և  
շոշափելով գտալ Լևոնյանի ծխատուիր:

Մաղարիչն այն եղավ, որ նրա ծխատուիը հերթով շըր-  
շեց ձեռքից-ձեռք: Ընկերները փաթաթեցին մախորկան և  
սկսեցին ծխել: Հետո պատմեցին սիրային զանազան ար-  
կածներ, հետաքրքիր ու ծիծաղաշարժ դեպքեր պատերազ-  
մից, Պատմում էին և ծիծաղում, քրքչում լիաթոք:

«Ի՞նչ անսպասելի նամակ, հիանալի առաջարկ»: Մտա-

ծում էր կեռնյանը գիշերը անկողնում պառկած: Նա կրծքին սղմեց նամակը և զգաց, թե ինչպես բացվում են նոր կյանքի, երջանկության դռները: Կարծես նոր լույս ու արև շողաց և այնպես պայծառ թվաց իրեն զրջապատը, կյանքը, աշխարհը...

«Վաղը երկի Քնարիկը հեռագիրը կստանա, ճամբակընկնի և մի քանի օրից կլինի այստեղ: Իսկ մինչ այդ, ես պատրաստ կլինեմ: Մի քանի օրից պիտի գնամ, նոր կյանք, նոր երջանկություն պիտի ստեղծվի ինձ համար: Ի՞նչ հրաշալի հեռանկար»:

Կեռնյանը վերջիշեց նամակի բովանդակությունը, անգիր էր արել: «Մենք միասին կապրենք և կստեղծենք նոր կյանք»: Իսկ հորեղբայրս արդեն գիտե այդ մասին և համաձայն է...

«Ինչպես բախտս բանեց: Երա՞զ է արդյոք, թե իրականություն...»

Նրա երկակայության մեջ Քնարիկը պատկերվեց որպես լուսեղեն, պայծառ տեսիլք, գեղեցկության և իմաստության տիպար: Եվ նա անզուապ ու անհուն կարոտ զգաց դեպի Քնարիկը, հորեղբայրը, երկանը, գեպի անծիր և անսահման հայրենիքը... Նա շափուսաց, որ այդ բոլորի համար զոհել է ամենաթանգը, աչքի լույսը: Նա խորապես զգաց, որ ինքը պայքարել է մի արդար գործի համար, այդ բոլորի պաշտպանության համար և իր թանկագին կորուսն իզուր չի անցել...

Այնուհետև կեռնյանի տրամադրությունը միշտ բարձր էր: Աշխույժ էր, կայտառ, զվարճախոս: Հաճախ էր նվագում ու երգում: Հիվանդանոցում բոլորն էլ իմացան նամակի բովանդակությունը և բոլորն էլ ուրախ էին, որ նրա կյանքը լավ է դասավորվում: Բայց ուրախալի նորություն եղավ նաև այն, որ մի քիչ էլ ավելացավ նրա տեսողությունը:

— Ինչպես երկում է, սիրելիս, երկաթի մանրուքները գետգհետե հեռանում, մեկուսանում են: Մյուս տարի կգաս,

կրկին կմիրահատենք աշքդ և է՛լ ավելի լավ կտեսնես,—  
հուսաղում էք պըտինորը:

Իսկ Մանդյուկը պնդում էր, որ զա երևանից Եկած նա-  
մակի աղբեցության արդյունքն է:

— Դա ավելի զորեղ էր, քան մագնիտի ուժը, — ասում  
էր Մանդյուկը:

Ինչ էլ լիներ պատճառը, Առողջանն այժմ համեմատա-  
բար լավ էր տեսնում: Մշուշու շրջապատը կարծես մի քիչ  
պարզվել էր, կարողանում էր տարբերել առարկաները, ծա-  
նոթ վայրում ինքնուրույն կերպով քայլել և որոշել ուղղու-  
թյունը: Բայց անծանոթ վայրում նա կդժվարանաբ այդ  
անել և գրել-կարդալ դեռ չէր կարող:

Մի երեկո, Նատալիա Իվանովնան մոտեցավ Առողջա-  
նին, թևանցուկ արեց և առաջարկեց հետևել իրեն, Առողջա-  
նը զարմացավ, որ փոխանակ բժշկարան գնալու, որ սովո-  
րաբար գնում էին «Ալլյա» ընդունելու կամ որևէ հեղուկով  
ժաքրելու աշքը, տնտեսուհին նրան տարավ ընդունարան և  
ասաց.

— Ահա ձեր խնդրած Արմենակ Առողջանը:

— Ես եմ, Արմենակ, Քնարիկը, — կանչեց ուրախ-ուրախ  
նրան սպասող աղջիկը:

— Ո՞հ, Քնար զան, արդեն եկա՞ր, այնպե՞ս անհամբեր  
սպասում էի քեզ:

Ու նրանք անդիմադրելի ուժով փաթաթվեցին մի-  
մյանց...

— Եկել եմ քեզ տանելու, պատրա՞ստ ես, — հարցրեց  
աղջիկը աղատվելով նրա գրկից:

— Պատրաստ եմ, հենց հիմա էլ կարող եմ ճամփա  
ընկնել:

— Առավոտը նավը կմեկնի: Տոմսերը գնել եմ արդեն, —  
ասաց աղջիկը և առաջարկեց նստել:

Նրանք տեղավորվեցին նստարանին և շարունակեցին  
գրուցք: Իսկ տնտեսուհին գնաց իր գործին: Առողջանի սիր-  
ութ ուրախությունից տակն ու վրա էր եղել, բարախում էր  
ուժգին: Այդ պահին նա այնպե՞ս ուզում էր լավ տեսնել

Քնարիկին, որոշել երա դեմքը, մարմինը, հագուստը, կոշիկ-  
նը... Այնպէս էր ուղում տեսնել Բայց իրեկվա մառա-  
խողի մեջ, Էլեկտրական փոքրիկ լամպի աղոտ լույսի տակ  
նրա աշխին Քնարիկը պատկերվում էր որպես մշուշածածկ  
անորոշ զանգված, որի հագուստն ու մարմնի զերմությունն  
դպում էր շոշափելով միայն: Այդ պահին նա պատրաստ էր  
ամեն ինչ զոհաբերել գեթ մի վայրկյան լավ տեսնելու համար  
Քնարիկին:

— Իսկ ինչպէս են աշքերդ, ի՞նչ արդյունք տվեց բժըշ-  
կությունը, — հարցրեց աղջիկը:

— Աշքերս լավ չեն տեսնում: Հագիվ եմ առարկաները  
զանազանում, — պատասխանեց Լևոնյանը ընկճված ձայնով,  
հանցանքի մեջ բռնված մարդու նման, կարծես դատարա-  
նումն էր գտնվում, հարցաքննում էին:

— Ոչինչ մի՛ մտածի, մի՛ հուսահատվի, ևս քեզ հետ  
եմ, ինչպես նամակումն գրել եմ, այնպիս էլ կլինի: Իմ վճի-  
ռը հաստատ է, անփոփոխ: Ես եկել եմ իրագործելու այդ  
վճիռը...

— Բայց պրոֆեսորն առաջարկում է մի տարուց Հետո  
կրկին գալ և վիրահատել տչքս: Նա հույս է տալիս, որ ավե-  
լի լավ կտեսնեմ, — միջամտեց Լևոնյանը ոգևորված:

— Ավելի լավ, մյուս տարի հս քեզ կրերեմ և կսպա-  
սեմ մինչև բժշկությունդ վերջանա և միասին կվերադառ-  
նանք առն...

Քնարիկի խոռքերը խորապես հուզեցին Լևոնյանին և  
նա ուրախությունից շգիտեր ինչ պատասխաներ:

Այնուհետև նրանք խոսեցին իրենց հետաքրքրող շատ  
հարցերի մասին: Դռնապանը եկավ և առաջարկեց հեռանալ:  
Դռները փակում էին: Իսկ տնտեսութին հագնվել, գնում էր  
տուն: Նա Քնարիկին հրավիրեց իր տուն՝ այդ գիշեր այսուեղ  
մնալու:

Լևոնյանը վերադարձավ պալատ և մտավ անկողին:  
Երջանկության շողերով ողողված, նրանց դյութիւն շրջանա-  
թրջանկության մասն բերերով նման բերկրեց ու ինդաց և հանձնվեց  
կում գտնվող մարդու նման բերկրեց ու ինդաց և հանձնվեց

Քնի ամենազոր թևերին:

Շատ սրտառուշ էր կոնյանի բաժանումն ընկերներից: Նրանք հոգեպես այնքան կապված էին միմյանց: Եթե նա հագնվեց և վերցրեց ճամպրովը, ընկերները հավաքվեցին և խստ զգացված ճամփա դրին նրան:

— Մեզ շմոռանաս, Արմենակ, — բացականչեց հիվանդներից մեկը:

— Բարով գնաս, երջանիկ լինի կյանքդ, — բարեմախթեցին մյուս ընկերները:

Նրանք այնպիսի բուռն ցանկություն ունեին տեսնելու այն աղջկան, որ եկել էր իրենց սիրելի ընկերոջը տանելու և բախտավորացնելու:

Եթե Քնարիկին թևանցով արած կոնյանը քայլերն ուղղեց դեպի մոտակա նավահանգիստ նավը նստելու, խորապես զգաց, որ իր համար նոր կյանք է սկսվում: Նա խորը շունչ քաշեց և կարծես է՛լ ավելի աշխուժացավ, կենդանացավ: Եվ նա ավելի թեթև, ավելի ազատ էր շնչում, եթե նավն սկսեց սահել կապուտակ ջրերի վրա, եթե զգաց հեռատարած ծովի զով շունչը:

Ու որքան նավը մոտենում էր հայրենական հողին, այնքան ավելի ուրախանում ու բերկրանքով էր լցվում նրա հոդին...





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատ. խմբագիր՝ Ա. ԽԵՂԱՔՅԱՆ  
Տեխ. խմբ.՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՃ 01565 Պ. 836. Տիրաժ 4000. 4 1/4 Տալ. մամ. Հեղ. մամ : Հանձնված  
է արտադ. 25/XI 46թ.: Ստորագրված է տպագրության 10/II 1947թ.:

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատ. Վարչության  
№ 3 տպարան, Երևան, Ալավերդյան № 65, 1947թ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028018

ԳԻՆԸ 5 Բ.

A | II  
28018

